



Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

Правила пользования

Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:


- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

О программе

Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу <http://books.google.com>.

**GRAD
EREN
284
BUHR**

A 992,300





5

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՍԲԱԼԱՅ

284

ԹԱԿԲԱՆՈՒԹԻՒՆ Ի ԳԱՂԱԿԵՐՆԵՐ



Ի ՏԳԱՐԱՆԻ

ՄԱՐԿԵԼԱԿԵՆ ԱԲՈՒՅՑ Ս • ՅԱՆՂԱԿԵՆԵՐ

ՅԵՐՈՒՍԱԼԷՍ

—1869—

17

The first part of the document discusses the importance of maintaining accurate records of all transactions. It emphasizes that every entry should be supported by a valid receipt or invoice. This ensures transparency and allows for easy verification of the data.

In the second section, the author outlines the various methods used to collect and analyze the data. This includes both primary and secondary sources, as well as the specific techniques employed for data processing and analysis.

The third section provides a detailed overview of the results obtained from the study. It includes a summary of the key findings and a discussion of their implications. The author also addresses any limitations of the study and suggests areas for future research.

Finally, the document concludes with a series of recommendations based on the findings. These recommendations are intended to guide the implementation of the study's results in a practical setting.

Մատենադարան

ԿԵՆՏՐԱԳՐՈՒԻԻԻՆ

Գրական

Պ Ա Ս Ք Ա Լ Ա Յ

Բ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Ա Ց

Մ • Ս • ՏԻՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ
ԱՇԱԿԵՐՏ ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐԳ

Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



Տ Պ Ա Ր Ա Ն Ի

ԱԾԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՒՌՈՑ Ս • ԵՆԿՈՎԱԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

— 1869 —

ՊՐԻՆՏԵՐ

ԳՐԱԿԱՆ

73

THE UNIVERSITY OF MICHIGAN LIBRARY

6 RAD
12 DEW
226
75000

GRAP
ERTN
284
10. CI. 99

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Բանագէտները շատ օգտակար կը համարեն պատանեկաց՝ երեւելի մարդկանց կենսագրութիւնը կարգաւ: Այսպէս անոնց կինաց օրինակները իփսա ազգու կերպիւ կը տղաւորեն պատանեկական սրտի և մտքի մէջ, և գեղեցիկ արդիւնքներ կ'արտադրեն:

Գրագիտական աշխարհը արդէն խոստովանած է Պասքալի մեծութիւնը. ուստի եւ մինք արժան կը համարենք այս մեծ և երեւելի կենսագրութիւնը հայերէն թարգմանութեամբ Հայ ազգի պատանիներուն նուիրել:



ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ Պ Ա Ս Ք Ա Լ Ա Յ



Եղբայրս ^(*) 1623 տարւոյն յունիս
19 Թուականին ծնաւ Վլերմանի մէջ .
Հօրս անունը Ստեփան էր (որդի Պատ-
քալայ) որ գահերէց էր մայրստան
մէջ . իսկ մօրս անունը Նիթուանէթ .
Երբ որ եղբայրս խօսիլ կարենալու
հասակը մտաւ մի հազուագիւտ մտքի
ցոյցեր տուաւ իրեն փոքր պատաս-
խաններովը , զորս պատշաճ ժամանա-
կին կը խօսէր . և մանաւանդ այն ա-
մէն հարցումներով , զորս կ'ընէր իրե-
րու բնութեան վրայ , որոնց վրայ ա-
մէն մարդ կը հիանար :

(*) Պատքալի կենսագրութիւնը գրուած է իւր
բրո՛ջ մեռամբ , որ է տիկին Փերիէ :

Այս սկզբնաւորութիւնը, որ գեղեցիկ յոյսեր կուտար, իրականութիւն էր, վասն զի նա իրեն հասակին աճման համեմատութեամբ օր քան զօր իւր ճարտարմտութեան սահմանը կ'ընդարձակէր, այնպէս որ իրեն հասակը ներածէն աւելի բարձր և նշանաւոր էր։ Այրս 1626 ին մեռած էր, երբ եղբայրըս արդէն երեք տարեկան էր, և հայրըս մինակ մնալով ընտանեաց բոլոր խնամքը իւր վրայ առաւ, մանաւանդ իւր մի հատիկ տղայ զաւակին, որուն բնատուր յատկութիւնները և մանաւանդ անոր շնաչխարհիկ մտաց նորանը շան ցոյցերը հօրս սրտին մէջ այնպիսի եռանդ մը բորբոքեցին, որ անոր կրթութեան համար ուրիշ դատտիարակ մը չկրնալով որոշել, անձամբ անոր կրթութիւն տալու պաշտօնը յանձն առաւ։ Եւ երբ այնպէս ըրաւ, եղբայրս այլ ևս ոչ մի վարժարան մտաւ, և ոչ վարժապետ մը ունեցաւ բաց 'ի հօրմէս։

1631 Թուսվանին հայրս Փարիզ գնալով զմեզ տարաւ իւր հետ, և այն տեղ իւր բնակութիւնը հաստատեց : Այս տեղափոխութենէն եղբայրս մեծ օգուտ քաղեց այն նպատակին համար զոր հայրս ունէր իրեն կրթութեան մասին . որովհետեւ յայանի բան մ'էր որ եղբայրս չը պիտի կրնար վայելել մի և նոյն խնամքը գիւղի մը մէջ, ուր իւր հոգացողութիւնք և շարունակ իրեն մօտը յաճախող ընկերութիւնք կրնային շեղել զինքը իւր խորհրդէն, մինչդեռ Փարիզի մէջ բոլորովին ազատ էր, ուր աշխատութեան տալով ինքզինքը յաջողեցաւ այսքան հանճարիմաց և սիրելի հօր մը տուած խնամքներն ու կրթութիւնը արգասաւորել :

Մանկան այս կրթութեան համար ըրած հօրս գլխաւոր սկզբունքն էր մանկական կարողութենէն բարձր գործքերով չըզբաղեցնել, և ասոր համար անոր լատինական լեզուն չը կամեցաւ ուսուցանել տասներկու տարեկան չէ :

լաճ, որպէս զի աւելի դիւրացնէ անոր
այն լեզուն. Այս միջոցիս մէջ, անոր
ժամանակը անօգուտ չանցունելու
համար հայրս անհօգ չեղաւ, այլ անոր
ընել կուտար այն ամենը՝ ինչ բանի
պընդունակ կը տեսնէր զանիկայ :

Անոր բոլոր լեզուաց վրայ տեղե-
կաւթիւն կուտար և կը ցուցնէր անոր
թէ ինչպէս մարդիկ՝ քանի մը կանոն,
ներու տակ ուսնուցիմ են զանոնք քե-
րականութեան մէջ, և թէ այս կանոն-
ները բացառութիւններ ունին, զոր
մտորդ կրնայ իւր ջանիւք իմանալ զա-
նոնք և նշանակել. և թէ այսպէս մար-
դիկ գտած են միջոց առհասարակ ա-
մեն լեզուները քաղաքէ քաղաք հա-
զորդելու :

Այս ընդհանրական գաղափարը
յարգարեց անոր միտքը, և անոր քե-
րականական պատճառները պարզեց .
այնպէս որ երբ նա քերականութիւն
ուսանելու սկսաւ, իրեն ամեն ըրա-
ծին պատճառները գիտէր, աւելի զա-

նոնք կ'ուսանէր, որոնք բացասու-
թեանց կարօտ էին։ Այս գիտութիւն-
ներէն յետոյ, հայրս ուրիշ ուսմունք-
ներ ևս հաղորդեց եղբօրս։ Շատ ան-
գամ անոր կը խօսէր բնութեան ար-
տաքոյ կարգի ազդեցութեանց վրայ
ինչպէս է վառօդը, և ուրիշ բաներ,
զորս ով որ քննելու ըլլայ, կը զարմա-
նայ բնութեան սքանչելեաց վրայ։ Այդ-
բայրս այս ձեռնարկութեանը վրայ
չատ կ'ուրախանար, բայց ամեն բանի
պատճառները կ'ուզէր գիտնալ, և ս-
րովհետեւ ասոնք ամենը իրեն ծանօթ
չէին և հայրս բաց 'ի սովորական բա-
ներէն (որոնք լուծուած էին արդէն,)
ուրիշ բան չէր ուզեր պատմել ուստի
միշտ դժգոհ կը մնար։ Վասն զի նա որ-
նէր զարմանալի մտքի մը յատկութիւ-
նը սխալներ նկատելու համար, և կա-
րող է մտորդ ըսել որ միշտ և ամեն
բանի մէջ ճշմարտութիւնը միայն տ-
նոր մտաց առարկայն եղաւ։ որովհե-
տեւ գոհ էր միայն իւր գիտակցու-

Թեա՛մք : Այսպէս նա իւր մանկու
Թենէն ինչ որ իրեն յայտնի ճշմարիտ
կ'երեւէր, անոր կը յարէր, այնպէս որ
եթէ մէկը իրեն թիւր մեկնութիւն
մի ընէր, կը ջանար անձամբ անձին
զայն որոնել, և բան մը ալ որոնելու
սկսաւ նէ ալ, զայն թող չէր տար մին,
չեւ գանէր մէկը որ զինքը գոհ ընէ :
Այսինգամ ընկերութեան մը մէջ սե-
ղանի տակ եղած ժամանակնին անոնց
մէ մէկը դանակով խեցեղէն սյնակի մը
զարնելով ու զեց որ մեծ ձայն մը հանէ,
բայց երբ ձեռք վրայ դրին ալ չը հըն-
չեց . նա՛ եղբայրս ու զեց մի և նայն
ժամանակ անոր պատճառը իմանալ,
և այս փորձառութիւն առիթ եղաւ
որ անիկայ ձայներու վրայ ուրիշ գիւ-
տեր եւս ըրաւ . և իւր տասներկու
տարեկան հասակին անոնց վրայ ճառ
մը յօրինելով հոն նշանակեց, որ և իւ-
կոյն ամենէն ընդունելութիւն գտաւ :
Աղբօրս հանձարը՝ երկրաչափութեան
մէջ մէկ արտաքոյ կարգի գիւղուա,

Տով սկսաւ յերեւան ելլել երբ տաս, ներկու տարեկան էր տակաւին, և զոր արժան կը համարիմ՝ մասնաւորապէս յիշատակել հոս :

Հայրս ուսողական գիտութեան հմուտ ըլլալով, այս պատճառաւ այս գիտութեան մէջ յաջողակ անձանց հետ բարեկամութիւն ունէր, որոնք շարունակ իրեն մօտ կուգային. բայց ուրովհետեւ նա նպատակ ունէր եղբորս լեզուագիտութիւն ուսուցանել, և գիտէր որ ուսողական (մաթեմատիք) գիտութիւնը միտք հոգնեցնող ուսումն է, ուստի չը կամեցաւ որ եղբայրս ծանօթութիւն մը ունենայ այս գիտութեան վրայ, վախնալով որ չըլլայ թէ լատին և ուրիշ լեզուներ ուսանելէ զայն դադրեցունէ, որոց մէջ կ'ուզէր որ կատարելագործուի : Այսպէս նա այս գիտութեան վերաբերեալ բոլոր գրքերը անյայտուցուց, և անոր ներկայութեանը այս ուսման վրայ իւր բարեկամներուն հետ անգամ խօսելէն

կը խուսափէր : Բայց այս ամեն զգուշութիւնները ոչ թէ միայն չէին ազդիլ եղբօրս հետաքրքրութիւնը, այլ նաեւ կը գրգռէին, այնպէս որ նա՝ շարունակ կ'աղաչէր հօրս որ իրեն մտածմամբ իրական ուսմունքը հաղորդէ իսկ հայրս կը մերժէր, խոստանալով որ եթէ ուսանէր լատին և յոյն լեզուները, ուսողական գիտութիւնն ալ իբր անոր վարձատրութիւն կ'ուսուցանէր անպատճառ :

Սա տեսնելով այս ընդդիմութիւնը հօրս կողմէն, օր մը հարցուց անոր թէ ինչ էր այս ուսումը, և թէ ինչ միջոցաւ մարդիկ անոր վրայ կը խօսէին կամ կը ճառէին. հայրս ալ պարզապէս ըսաւ անոր թէ նա՝ ճիշտ ձեւեր չեն ելու և անոնց ունեցած բոլոր համեմատութիւնները գտնելու միջոց մ'է. և միևնոյն ժամանակը ուրիշ անգամ անոր վրայ խօսք բանալու ու անոր վրայ խոկալու հրաման չը տուաւ : Բայց եղբօրս միտքը, որ այս սահմանին մէջ

չէր կրնար պարփակել, երբոր այս փոքրր յայտարարուածիւնը լսեց՝ թէ ուսողական գիտութիւնը անվրէպ միջոց մ' է ճշգրիտ ձեւեր նկարելու, սկսաւ իրեն զբօսանաց ժամերուն մէջ անձամբ անոր վրայ խորհրդածութիւն ընել որահի մը մէջ միայնակ, ուր ինքը կը գբօսնուր. կ'առնէր ածուխ և տախտակներու վրայ ձեւեր կըսկսէր շինել և զայն կատարելու համար միջոցներ փնտռելով. (օրինակի համար, բոլորովին կըր շրջանակ և եռանկիւն մը, որուն կողմանքը և անկիւնները հաւասար են, և ուրիշ ասոնց նման բաներ)։

Այս ամենը ինքը միայնակ գտնելէն յետոյ, ասոնց մէջ ձեւերու համեմատութիւնները կը փնտռէր. Ռայց որովհետեւ հայրս մեծ ջանք ըրած էր ծածկել ամեն բան անկէց, այս պատճառաւ անունները երբէք չէր գիտեր, որով ստիպուեցաւ անձամբ անձին անոնց սահմաններ կամ անուններ գնել. շրջանակը կը կոչէր կլօ, գի-

ծը՝ Գառապան այսպէս և ուրիշները :

Այս սահմաններէն զկնի նա ինքն իրեն համար խնդիրներ չինեց և լուծեց. և այսպէս մէկէն, դէպի միւսը մը զուելով իրեն հետախուզութիւնը այնքան յառաջ տարաւ, որ Ալեքիդի առաջին գրքին մինչեւ երեսուն երկու երրորդ առաջարկութեան հասաւ : Այրբոր այսպէս ասոնց վրայ զբաղած էր, հայրս անոր յատկացեալ սենեակը մտաւ առանց եղբօրմէս տեսնուելու . և տեսնելով զանիկա սաստիկ զբաղած՝ երկար ժամանակ այնպէս առանց տեսնուելու ստիպուեցաւ կենալ : Արդ չը գիտէր թէ արդեօք ո՞րը աւելի զարմանք եղաւ, որդւոյն հայրը տեսնելը որուն դէմ յայտնապէս սրտուիրանազանց կը գտնուէր ինքը, թէ հօրը որդին այս բոլոր գործքերուն մէջ տեսնելը . բայց հօրը զարմանքը աւելի մեծ եղաւ երբ անոր ինչ բանի պարապիլը հարցունելով, պատասխան ստացաւ թէ՛ Ալեքիդի առաջին գրքին երեսուն

երկու երրորդ առաջարկութիւնը կ'ա-
րոնեմ: Հայրս զայն փնտռելու հա-
մար իրեն ըրած գիտաւորութեան և
մտածութեան առիթք անորմէ խընդ-
րեց, որուն սրատասխանեց 'նա թէ' ու-
րիշները գիտնալովս է որ զանոնք կ'որու-
նեմ. և յետոյ մի և նոյն հարցումներն
ըրաւ հայրս անոնց վրայ, որով եղբայ-
րըս քանի մը հատը լուծեց զորս ինքը
չինած էր. և վերջապէս յետոս գնալով
և բոլորակները բացատրելով մինչեւ
իւր ըրած սահմաններուն ու առած-
ներուն եկաւ: Հայրս այս ճարտարա-
մտութեան և կարողութեան վրայ այն
քան զարհուրեցաւ՝ որ առանց սլ ա-
նոր բառ մը արաստանելու թողուց
զանիկա և Պ. Փայլէօրին մօտ գնաց,
որ իւր մտերիմ բարեկամն էր, և ասի-
կա և ս բաւականին գիտնական մարդ
էր: Հոն հասնելուն պէս հայրս՝ ի-
բրբ յափշտակուած մարդ մը, անշարժ
կայնեցաւ. զայս տեսնելով Պ. Փայ-
լէօր, եւ մանաւանդ տեսնելով այն

ծրտասուէքը որ ունոր աչքերէն կը
թափէր, աղաչեց որ իրեն տհաճու-
թեան պատճառը անյապաղ իրեն ը-
սէ : Հայրս անոր պատասխանեց թէ՛
ես կ'արտասուեմ ոչ թէ տրամութե-
նէ, այլ սրտիս ուրախութենէն : Դուք
քաջ տեղեակ էք արդէն այն հոգե-
րուն և ջանքերուն, զոր իմ աղուս
երկրաչափութեան ուսմունքը չու-
սուցանելու համար ըրի, վախնալով որ
անիկա միւս բոլոր ընթերցանութեանց
արգելք չըլլայ, սակայն տես ահա ի-
րեն ըրածը : Ըստ վրայ ցուցուց ա-
նոր բոլոր եղբօրս մօտ գրածները. ու-
րոնց մէջ քանի մի պայմանաւ մարդ-
կրնար ըսել որ ուսողական գիտութե-
նը նա հնարած է : Պ. Փայլէօրն ա-
կաւ զարմացաւ՝ որքան որ զարմացե-
ր հայրս, և անոր ըսաւ որ՝ արդա-
րութիւն մը չէր ալ անորմէ այս գի-
տութիւնը արգիլելը, այլ պէտք է ի-
րեն թողուլ, որ սոյն գիտութեան
վերաբերեալ գրքեր կարդայ :

Հայրս յարմար առիթ համարե-
լով անոր Լեւիւրի Տարերջ տուաւ,
իրեն զբօսանաց ժամերուն մէջ կարդա-
լու: Նա զանոնք տեսնելով և առանց
ոչ մի բացատրութեան կարօտութիւն
ունենալու հասկնալով՝ սկսաւ ինքն
ալ յօրինել, և այնքան յառաջացաւ
որ միշտ ներկայ կը գտնուէր այն շա-
բաթական ժողովներուն, ուր Փարիզի
բոլոր հանձարեղ անձինքը կը ժողովե-
ին իրենց երկասիրութիւնները բե-
րելու՝ կամ ուրիշներունը քննելու հա-
մար: Եղբայրս այս ժողովոց մէջ նշա-
նաւոր էր թէ՛ քննութեան և թէ՛ իրեն
արդեանց համար, որովհետեւ ինքը
շարունակ նորանոր բաներ կամ իրո-
ղութիւններ բերողներէն մէկն էր:
Այս կաճառաց կամ ժողովոց մէջ Իտա-
լիայէն, Վերմանիայէն և ուրիշ օտար
երկիրներէն զրկած խնդիրներ կային,
որոց իւրաքանչիւրին վրայ եղբայրս ի-
րեն կարծիքը յայտնեց, այնքան ճշդու-
թեամբ որ ուրիշներէն մէկը չէր կա-

րողացած, քանզի այնպիսի կենդանի
լոյս մը ունէր անիկա, որ պատահե-
ցաւ երբեմն ուրիշներէն չը նշմար-
ուած սխալները՝ ինքը տեսաւ և պար-
զեց: Սակայն այս բոլոր ուսմանց մէջ
երկրաչափութեան՝ միմիայն իրեն զբա-
սանաց ժամանակ կը պարտապէր, վա-
սըն զի լատինական լեզուն կանոննե-
րու վրայ կը սովորէր, զոր հայրս ա-
ռանձինն յօրինած էր: Եւ որովհետեւ
այս գիտութեան մէջ իրեն այնքան
եռանդեամբ փնտռած ճշմարտութիւ-
նը կը գտնէր, աւստի ասոր վրայ այն-
պէս գոհ գտնուեցաւ, որ բոլոր իւր
մտադրութիւնը գարձուց անոր վրայ,
և այնպէս յառաջադիմութիւններ ը-
րաւ անոր մէջ քիչ ժամանակէն, որ
իւր տասն ու վեց տարին կոնյեւնէրու
վրայ ճառ մը գրեց. և այս՝ մտքի այն
պիսի մեծ ճիգ մը համարուեցաւ, որ
ամեն մարդ կ'ըսէր թէ Արքիմեթէս
երկրաչափէն 'ի վեր երբէք այսպիսի
կատարեալ գործ մը չը տեսնուեցաւ.

և իմաստուն անձինքը կը խորհէին զանոնք տպելու, զի նոքա կ'ըսէին որ այն երկը միշտ զարմանալի պիտի ըլլայ, և նաև եթէ տպուէր որ այն ժամանակի մէջ ասիկա հնարողը տաան ու վեց տարեկան հասակին մէջ էր, աւելի այս պարագայս պիտի յաւելցնէր անոր արժանաւորութիւնը. բայց եղբայրս՝ փառասիրութեան և համբաւոյ տենչը իր մէջ չունենալով արժէք չը տուաւ անոր շատ, և այսպէս այս երկը չը տպուեցաւ:

Այս ժամանակներուս մէջ եղբայրս լատիներէն և յունարէն կ'ուսանէր, և բաց 'ի յայսմանէ՝ ճաշի ժամանակ և ճաշէն վերջը, հայրս երբեմն տրամաբանութեան և երբեմն բնագիտութեան և փիլիսոփայութեան ուրիշ մասանց վրայ կը խօսէր անոր, և այս է իրեն բոլոր ուսածները առանց վարժատուն մը երթալու, և անոնց համար հօրմէս զատ ուրիշ վարժապետ չունեցաւ, նոյնպէս և յետոյ սովոր

րածներուն համար : Հայրս անոր այսպէս ամեն գիտութեանց մէջ ըրած յառաջագիմութեանց վրայ շատ կ'ուրախանար, բայց չընչմարեց որ այն մեծ և շարունակեալ զբաղումները այսպիսի մի փափուկ հասակի մէջ անոր առողջութեանը կարող էին շատ վնասել, և յիրաւի տասն և ութը տարեկան էր՝ սկսաւ նա տկարանալ : Իսկ հիւանդութիւնը զոր նա կրողար, այն ատեն այնքան զօրաւոր չըլլալով, չկրցաւ զայն իւր սովորական զբաղումներէն արգիլել. այնպէս որ նա իւր տասնու ինը տարեկան հասակին մէջն էր երբ հնարեց թուաբանական գործին, որով ոչ թէ միայն առանց գրչի և առանց հաշուի գործիքներու կրկարողանայ մարդ կատարել հաշուոյ ամեն տեսակները, այլ և առանց թուաբանութեան ոչ մի կանոնը գիտնալու՝ մարդ կրնայ ընել բոլորը անվրէպ ճշգրտութեամբ :

Այս գործը բնութեան մէջ իբրև

մէկ նոր բան համարուեցաւ, վասն զի մեքենայի վերածեց գիտութիւն մը որ մտքի մէջ կը գահակալէ, այնպիսի ըստուգութեամբ մը բոլոր համարողական գործողութիւնները ընելու միջոցը գտնելով, առանց խորհելու կարօտութիւն մը ունենալու: Այս աշխատութիւնը զինքը շատ հոգնեցուց, ոչ թէ մտածման և կամ շարժման համար զոր առանց դժուարութեան գտաւ, այլ այս բոլոր բաները (զանոնք) գործաւորաց հասկըցնելու համար: Այսպէս զի երկու տարուան մէջ հազիւ այն կատարելութիւնը ստացաւ, ուր է հիմայ:

Իայց այս հոգնութիւնն ու տկարութիւնը, զորս ինքը քանի մը տարուանէ ՚ի վեր ունէր, զինքը հիւանդութեան մէջ ձգեցին, այնպէս որ շատ անգամ մեզ կ'ըսէր թէ՛ տասն և ութը տարեկան հասակէս ասդին օր մը առանց ցաւի երբէք անցուցած չունիմ: Այսու սմենայնիւ այս ցաւերը

չարունակ միօրինակ սաստկութեամբ չըլլալով, երբ մէկ քիչ կը հանդարտէին, իսկոյն նորա միտքը կըսկսէր նոր բան մը որոնելու : Քսան երեք տարուան շրջանը մտնելով, և Թորիչէլիին փորձերը տեսնելով, ինքն ալ յետոյ ուրիշ փորձեր հնարեց, զոր իրեն փորձառութիւնները կ'անսուանեն : որ պարզապէս կ'ապացուցանէր թէ այն բոլոր ազդեցութիւնները, զոր մարդիկ մինչեւ այս ժամանակ դատարկութե կը տային, օդին ծանրութենէն յառաջ կը գան : Վարդկային գիտութեանց մէջ իրեն միտքը հոգնեցընող վերջին զբաղումը այս եղաւ . և թէպէտ յետոյ անիւր հնարեց, սակայն ասիկայ առանց ջանադրութեան և առանց մը աածելու գտնելուն համար, (ինչպէս տեղը պիտի ըսենք,) մեր խօսքին չը հակառակիր : Այս փորձառութենէն ան միջապէս յետոյ, երբ տակաւին քսան չորս տարեկան հասակին չէր մտած, աստուածային Նախախնամութիւնը

այնպէս կամեցաւ որ նա բարեպաշտական գրուածքներ կարդալով իւր միտքը լուսաւորէ . և ասով իմացաւ եղբայրս թէ քրիստոնէական կրօնքը կըստիպէ զմարդ միայն Աստուծոյ հաւատար ասարիչ և ուրիշ առարկայ մը չունենալ բաց ՚ի անկէ . և այս ճշմարտութիւնը իրեն այնքան յայտնի օգտակար և հարկաւոր երեւցաւ , որ իւր բոլոր խուզարկութիւններն ու հետամտութիւնները վերջացնելով , և բոլոր ուրիշ գիտութիւններէն հրաժարելով մի միայն այն մէկ բանին ըզբաղել որոշեց . զոր Ախուս Վրիստոս կ'անուանէ միայն կարեւոր (1), այն է աստուածային ճշմարտութեանց և լգատուիրանաց նուիրել իր կեանքը .

Աստուծոյ մէկ մասնաւոր պաշտպանութեամբը նա իր երիտասար-

(1) Մարթա՛ , Մարթա՛ դու հոգաս և բազում իւրք զբաղեալ ես , բայց աստ սուրբն ուրիշ է . Մարիամ մասն բարի ընտելաց , որ ոչ բարձցի ՚ի նմանէ » : Ղուկ . Ժ . 41 .

դուժեան ամեն տեսակ մոլորութիւն,
ներէն ազատ էր մինչեւ այն ատեն, և
մանաւանդ աւելի հեռի գտնուեցաւ
այնպիսի մոլորութիւններէ որ կրօնքի
կրնայէին, իրեն հետաքրքրութիւննե-
րը բնական բաներու մէջ սահմանափա-
կելով: Շատ անգամ ինձ կ'ըսէր՝ որ
այս երախտիքը ուրիշներու հետ հօրս
կը պարտիմ. վասն զի ինքը դէպ ՚ի
կրօնքը շատ ակնածութիւն ցուցնելով,
մանկութենէ ներշնչած էր անկէ եղ-
բօրս ալ ուսուցանելով անոր թէ, ինչ
որ հաւատոյ կը վերաբերի՝ անոր հնա-
զանգելէ զատ անօգուտ է պատճառ
որոնել:

Այն օրինակները՝ զորս շարունակ
մէկ հօրէ մը կ'ընդունէր, այն հօ-
րէն, զոր կը սիրէր և կը պատուէր ՚ի բո-
լոր սրտէ, խորին տպաւորութիւն կ'ը-
նէր իրեն մտաց մէջ: Այնպէս որ լու-
րով ինչ ինչ մոլորութիւններ կրօնական
վարդապետութեան մասին, երբէք և
ոչ մի կերպով վրդովեցաւ իրեն հաս-

աատամտութիւնը, թէպէտ և ինքը տակաւին երիտասարդ էր. այլ նա որ ամեն բանի պատճառ կը փնտռէր իրեն հետաքրքրութեամբ լի և այսքան ընդարձակ և մեծ հանձարով, այժմ իբրո մանուկ մը կը հնազանդի այն ամեն իրողութեանց, որք կրօնքի կը վերաբերին, մուրրական համարելով այն անձինքը որոնք այս գլխաւոր սխալման մէջ ընկած էին, թէ մարդկային բանականութիւնը ամեն բանէ վեր է և որոնք չէին ուզեր ճանաչել հաւատոյ սահմանը: Այս իր պարզմտութիւնը անոր մէջ ցմահ թագաւորեց, մինչեւ անգամ այն օրէն՝ երբ նա որոշեց ձգել ուրիշ ամեն ուսմունքները և կրթօնականին հետեւիլ, չը զբաղեցաւ նոյն Աստուածաբանութեան հետաքրքրական հարցմանց մէջ, այլ իրեն մասց բոլոր զօրութիւնը դարձոյց քրիստոնէական բարոյականութիւնը ուսանելու և ՚ի գործ դնելու, որուն և բոլորովին նուիրեց իրեն բոլոր տա-

զանդներն ու ձիւրքերը , զորս Աստուած պարգեւած էր . որն որ իրեն կենաց մնացորդին մէջ ուրիշ բան չըրաւ՝ բացի ՚ի գիշեր ցորեկ Աստուծոյ սրի նաց վրայ խորհելէն .

Թէպէտ դպրոցական աստուածաբանութեան մասնաւոր ուսում մը չուսաւ , սակայն և այնպէս նա եկեղեցւոյ վճիռները դիտէր , որոնք ընդդէմ հերետիկոսութեան նուրբ ճարտարմտութեամբ հնարուած էին , և Աստուած այն ժամանակէն թուաւ առիթ անոր որ երեւցնէ ամենուն իւր նախանձախնդրութիւնը զոր ունէր առ կրօնքն .

Այս միջոցիս Ռուէն գաւառի մէջ էր նա , ուր հայրս արքունի գործակալութեան մէջ կը գտնուէր , և ուր կար նաեւ նոր փիլիսոփայութիւն ուսուցանող մէկը , որ բոլոր հետաքրքիր անձինքը կը զարմացունէր : Եղբայրս ստիպուեցաւ իրեն բարեկամներէն երկու երիտասարդ մարդ-

կանց հետ այս մարդու մօտ գնալ :
բայց շատ զարմացան , երբոր տեսան
թէ անիկայ իրենց հետ բանակցելով
և իրեն փիլիսոփայութեան սկզբունք
ները բացատրելով այնպիսի հետեւու
թիւններ կը հանէր անոնցմէ հաւատոյ
խնդիրներու մասին , որ եկեղեցւոյ վը
ճիւղներուն դէմ առ դէմ կը հակա
ռակէին : Այս փիլիսոփայն իրեն թիւր
խելամտութեամբը կ'ապացուցանէր՝
թէ Յիսուսի Քրիստոսի մարմինը սուրբ
Կուսի արիւնէն կազմուած չէր , այլ
ուրիշ առանձին նիւթով մը ստեղծ
ուած կը համարէր , և ուրիշ ասոր նը
ման բաներ : Ասոնք անոր դէմը խօսե
ցան , բայց նա իրեն մտքին վրայ հաւ
տատուն կեցաւ : Ուստի ասոնք նը
մարելով այն վտանգը՝ զոր ապակա
նեալ զգացմանց տէր եղող մէկը իրեն
գաղափարները երիտասարդութեան
հազօրդելու թոյլտուութենէն յա
ռաջ պիտի բերէ , որոշեցին նախ՝ ամե
նուն ազդարարութիւն ընել , և յետոյ

նել նոյն իսկ Ռուէնի արքեպիսկոսոսը
Կայրնի մէջ. որ այս ամեն իրողու-
թիւնը աղէկ մը քննելով այնքան կա-
րեւոր գտաւ զայն, որ իսկոյն իւր
խորհրդականին յայտագիր մը ղրկեց,
որուն մէջ յայտնապէս կը հրամայէր
Պ. Տիւ Պելային տալ հրաժարիլ այդ
մարդուն հաւատոյ այն խնդրոց սը-
խալ կարծիքէն, որոց համար ամբաս-
տանուած էր, և ամեն վէճ և հարցա-
փորձութիւն կատարել խորհրդակ-
ցութեամբ ամբաստանողաց: Իրո-
ղութիւնը այժմ շատ դիւրին կատար-
ուեցաւ. փիլիսոփայն արքեպիսկոսոս-
սէն ատեան կոչուելով վերստին իւր
բոլոր սխալ դրութիւններէն կամ վար-
դապետութիւններէն հրաժարեցաւ
անկեղծօրէն, որովհետեւ անկէ ետքը
երբէք ռիսութեան նշոյլ մը զինքը ամ-
բաստանողներուն դէմ չը ցուցուց,
ասով մարդ կրնար մակաբերել որ նա
անձամբ անձը խաբեր էր այն սխալ
եզրակացութիւններով, զորս իւր սը-

Դադարեցունել զայն բոլորովին իրեն
 վարդապետութիւնը տարածելէն, եւ
 թէ իրեն տրուած խորհրդին ընդդիմա
 նայ: Այսպէս պատահեցաւ իրողու
 թիւնը: Արովհետեւ նա այս խորհուր
 զը արհամարհեց, ուստի ասոնք իրենց
 պարտաւորութիւն համարեցին իմաց
 տալ Պ. Տիւ Պէլային, որ այն ժամանակ
 հրամանաւ արք եպիսկոպոսին Ռուե
 նի վիճակին մէջ եպիսկոպոսական պաշ
 տօն կը վարէր: Պ. Տիւ Պէլայ այս
 մարդը որոնել տուաւ, և հարցափոր
 ձելով զայն, հաւատոյ երկդիմի դա
 ւանութեամբ մը՝ զոր նա իրեն ձե
 ոօք դրեց, բոլորովին խաբուեցաւ, և
 մանաւանդ մեծ բանի տեղ չըզբաւ
 այս կարեւոր խնդիրը, որ երեք երի
 տասարդներէն առարջարկուած էր:
 Սակայն երբ ասոնք, այսինքն եղբայրս և
 իրեն երկու բարեկամները տեսան այս
 հաւատոյ դաւանութիւնը, ճանչցան
 անոր մեծ մնասակարութիւնը, որ զե
 րենք ստիպեց իսկ և իսկ երթալ գլտ

խալ սկզբունքներէն կը հաներ : Նրա մարիտը կը խոստովանինք որ բնաւ ա նոր մէջ մարդ չէր կրնար գտնար նը պատակ մը այնպէս դաւանելուն , և միւս կողմէն ալ զայն միմիայն իրեն մոլորութենէն ուղղելու դիտաւորութիւնը ունէին միւսները , որպէս զի այն երիտասարդներն ալ անկէց ա զատ մեան , որոնք այնպիսի նուրբ խընդիրներուն մէջ կարող չէին ձշմարիտը սխալէն որոշել : Այսպէս քաղցրութեամբ գործը վերջացաւ և եղբայրս շարունակեց Աստուծոյ հաճոյ ըլլալու միջոցներ որոնել . և այս քրիստոնէական խոստովանութեան սէրը քսան և չորս տարեկան հասակին այնչափ իրեն մէջ վառեցաւ որ բոլոր մեր տան մէջ ծաւալեցաւ : Սինչեւ անգամ հայրս երբէք իրեն ամօթ չհամարելով որդւոյն վարդապետութեան հետեւիլ , մինչեւ իւր մահը շարունակ լի առաքինական գործառնութեամբ արդար կեանք մը անցուց : Քայրս՝ որ

խիստ տաղանդաւոր էր և ճոխ մտաց ձրից տէր, և իրեն մանկուլթենէն այն պիսի համբաւ մը ունէր, զոր շատ քիչերը կ'ունենան իգական սեռէն, այն պէս մը շարժեցաւ եղբօրս ճառերէն, որ բոլորովին Աստուծոյ նաւիրուելու համար որոշեց հրաժարիլ այն ամեն օգուտներէն և աշխարհային վայելչութենէն զոր մինչեւ այն ժամանակ սիրած էր. և հաւատաւոր դարձաւ այն ատենէն մէկ սուրբ և ամենախիստ վանքի մէջ՝ ուր այնքան գեղեցիկ սովորութիւններ մտցուց, որովք արդէն Աստուած զինքը զարդարած էր, և մարդիկ զայն աւելի մեծ պաշտօններու արժանի գտան, զորս մեծ հաւատարմութեամբ մը միշտ անթերի կատարեց. եւ այսպէս սրբութեամբ մեռաւ 1661 հոկտեմբեր 4 ին, երեսուն չորս տարուան հասակին մէջ:

Իսկ եղբայրս՝ զոր Աստուած իր բոլոր բարութիւնները գործելու համար կը ծառայեցնէր, կը տառապէր իրեն

չարունակեալ հիւանդութեանց մէջ, որ քանի գնաց սաստկացաւ. բայց ուրովհետեւ այն ժամանակ անիկա ուրիշ ուսմունք և գիտութիւն չէր ճանչնար՝ բայց միայն մարդկային կատարելագործութիւնը, ուստի մեծ զանազանութիւն մը կը գտնէր ասոր և մինչև այն ատեն իրեն միտքը հոգնեցնող գիտութեանց մէջ, ինչու նոր իրեն տրկարութիւնները փոխանակ ուրիշ ուսմանց մէջ յառաջադիմելուն արգելք ըլլալու. ընդհակառակն անոր կը նպաստէին նոյն իսկ տկարութեանց մէջ, զորս զարմանալի համբերութեամբ կը կրէր: Այսօրերս զգալի ընելու համար կը պարտաւորիմ օրինակ մը յառաջ բերել:

Բաց ՚ի միւս տկարութիւններէն կամ հիւանդութիւններէն տեսակ մը հիւանդութիւն ևս ունէր, որ չէր կրնար հեղուկ բան մը խմել կամ կլլել առանց տաքցունելու, և այն ալ մէկ մէկ կաթիլ. և ասկէ զատ ունէր գըլ-

խառ անարանելի ցաւ մը, և չափազանց
տաքութիւն ընդերաց և ուրիշ շատ
ցաւեր, սրոց համար բժիշկները իրեն
պատուիրեցին երկու օրը մի անգամ
լուծողական դեղ առնաւ, մօտ երեք
ամիս, այնպէս որ ամեն տեսակ դեղերը
ընգունել պէտք եղաւ, զանանք տաք
ցունելով և կաթիլ կաթիլ կրանելով ա-
ռանկ տրտուների, որ ճշմարիտ տանջանք
մ' էր և իրեն մօտ բոլոր եղանակներուն ալ
ցաւալի :

Այս դարմաններու շարունակաւ,
թիւնը, և սւրիչներ զորս անտք գոր-
ծագրել տուին, զինքը քիչ շատ հանգս-
տացուցին, բայց կատարեալ առողջու-
թիւն չը տուին, այնպէս որ բժիշկնե-
րը զայն բորբոսիկն առողջացներու հա-
մար ապահովութեամբ ըսին որ մտաց
զբաղմունքը թողուլ պէտք է, և միայն
որչափ կարելի է ուրախանալու միջոց-
ներ փնտռել զբօսանքներով : Այդպե-
րբ նախ և առաջ մերժեց այս խոր-
հուրդը, քանի որ վտանգ կը նշմարէր

անոր մէջ. բայց վերջապէս հաւանե-
ցաւ հետեւիլ անոնց ըսածին, իրեն
առողջութիւնը վերստին ձեռք բերե-
լու համար բոլոր իրեն ճիգը թափե-
լու պարտաւորութիւնը զգալով, և
խորհեցաւ որ պատուաւ որ զբօսանքնե-
րը իրեն շէն մնասեր, և սկսաւ ներե-
լու շարժումը արձանալ: Քէպէտ Նո-
տուծոյ ողորմութեամբը ինքը ազատ
մնաց մոլութիւններէ, սոյնու ամե-
նայնիւ, որովհետեւ Նոտուած զայն ա-
ւելի մեծ և կատարեալ կոչման կը
պատրաստէր, չը թողուց զանիկայ այս
վիճակին մէջ, և ձեռք առաւ այս նպա-
տակին համար միւս բոլոր, ինչպէս որ
ժամանակին եղբայրս ձեռք առած էր
բոլոր աշխարհային ճանապարհէ քա-
շել հանելու համար: Բոլոր այն ժա-
մանակին հաւատաւոր էր, և սուրբ
կեանք մը կը վարէր, որ բոլոր վանքին
մէջ եղողներուն օրինակ կրնար ըլլալ.
այս վիճակին մէջ ըլլալով, նա չըկրցաւ
հանգուրժել, տեսնալով որ նա՛ ու-

բուն Լստու ծմէ վերջը այս շնորհքները
կը պարտէր, չէ կրցեր զայն ժառան-
գել: Եւ որովհետև եղբայրս յաճախ
զանկիայ կը տեսնէր, ուստի այս ալ
յաճախ իրեն կը խօսէր անոր վրայ, և
վերջապէս քաղցրութեամբ և զօրաւոր
պատճառներով համոզեց զայն՝ որմէ
ինքը առաջին անգամ համոզուած էր:
Լստապէս եղբայրս որոշեց թողուլ բոլո-
րովին աշխարհի հետ ունեցած հաղոր-
դակցութիւնը և անցաւ որ վայելքնե-
րը՝ իւր առողջութեան վտանգէն ան-
գամ չակնածելով, որովհետեւ կը հա-
ւատար՝ որ երջանկութիւնը ամեն բա-
նէ նախամեծար է:

Լստ միջոցիս 30 տարեկան էր,
և շարունակ հիւանդօտ, եւ ահա
այս ատենէն՝ մինչեւ իւր մահը ան-
ցուցած կենաց եղանակը միօրինակ էր:
Լստ նպատակին հասնելու և իւր բո-
լոր սովորութիւնները ջնջելու համար
անդափօխութիւնը դիւրին միջոց մը
երեւցաւ իրեն, ուստի քանի մը ժա-

մանակ գլուղը բնակեցաւ, ուրկից վե-
րագարձած ժամանակ յայտնապէս և
պնդան անգամ կ'ըսէք որ կ'ուզէ աշխար-
հք թողուլ, որ վերջապէս աշխարհք
զինքը թողուց. և սյս տեղափոխու-
թեան մէջ նա երկու գլխաւ որ ակրո-
քանց վրայ հիմնեց իւր կենաց կանո-
նք, այսինքն հրատարիլ բոլոր զուսք
ճութիւններէ և ամեն ունայնութիւն
ներէ, և սյս կանոնաորութեան մէջ
իրեն կենաց մնացորդը անցուց. Նստ
մէջ ալ յաջողելու համար սկսաւ ան-
կից ՚ի վեր ինչպէս և մինչեւ վերջ.
իրեն ճարտից սպասաւորութեանը
մասնակցիլ, որքան որ իւր կարողու-
թիւնը կը տանէր. գրինակի համար,
գիշերուան պատկելու մահիճները
ինքը կը շտկէր, և խահանդէն իւր
ճաշք ինքը կը բերէր սենեկին մէջ
և վերստին հոն կը տանէր. և ուրիշ-
ները միայն կը գործածէր իրեն կերու-
կաւր եփելու և քաղաք երթալու և
ուրիշ պնայիսի բաներու՝ զոր անձամբ

անձին ինքը կարողութիւն չունէր բնեւոր : Իրեն բոլոր ժամանակը ազօթքով և սուրբ գրոց ընթերցմունքով կ'անցունէր. այս վերջինին մէջ անհուն կամ չափազանց ուրախութիւն կրգգար և կ'ըսէր՝ որ սուրբ Վիրքը մտաց գիտութիւն մը չէ, այլ սրախ. որ անոնց համար հասկանալի է, որոնք ուղիղ սիրտ ունին. իսկ անոնք՝ որոնք ուղիղ սիրտ չունին, անոնց համար բարբոսման մութ է :

Այս դիտաւորութեամբ շարունակ Ս. Վիրք կը կարդար հրաժարելով բոլորովին իւր մտաց ամեն լայտերէն. և այնպիսի մտադրութեամբ և շարունակութեամբ կրգգաղէր անոր, կրդեգերէր անոր մէջ. որ ամենը գոց գիտէր, այնպէս որ ստալ երբէք մարդ չէր կրունար բան մը իրեն պատմել. որովհետեւ երբ Ս. Գրոց վրայով խօսք մը ըլլար, ճշդութեամբ կ'ըսէր՝ այս սուրբ գրքէն է և այն չէ՝ ըսելով տեղը կրցունէր : Անձ հագառարութեամբ

մեկնութիւնները կը կարգար, վառն
զի կրօնի յարգանքը՝ ուր ինքը ման
կութեանէ մնած և մեծցած էր, ջերմ
սիրոյ փոխաւած էր հաւատոյ ճշմար
տութեանց համար, թէ մաքի հնա
զանդութեան կամ հպատակութեան
մասին և թէ երկրիս մէջ ՚ի կիր արկա
նելու, որուն մէջ կ'ամփոփի բոլոր
կրօնը, և այս սէրը կըստիպէր ղինքր
ջնջել այն ամենը, որ կրնար ընդդիմա
նալ և հակառակել այս ճշմարտու
թիւններուն :

Ինական ճարտարախօսութիւն մ'
ունէր, որ անոր սքանչելի գիւրու
թիւն մը կուտար խօսելու ինչ որ կը
կամէր, և ինքն ալ անոր վսայ այն կա
նոնները աւելցուց, զորս ասկաւին
անձ մը խորհած չէր, և որոնք իրեն
այնչափ օգտաւէտ էին, որ իրեն գրած
ոճին հեղինակ ինքը կը համարուէր,
այնպէս որ՝ ոչ թէ միայն կրնար ըսել
ինչ որ կ'ուզէր, այլ նաև կ'ըսէր այն
սճով, ինչպէս որ իրեն հաճելի կը

Թուէր: և իրեն գրաւթիւնը կը ներ-
կայացնէր ճշմարտութեամբ այն՝ զոր
ինքը կ'աւազատէր. և այս բնական
յստակ և միանգամայն զօրաւոր և առ-
դու գրեցաւ սճն այնքան իրեն յա-
տուկ և մասնաւոր էր, որ երբ Վա-
սատական նամակները հրատարակուեցան,
ամեն մարդ իմացաւ որ նորա գրածն
է, թէպէտ և նոյն իսկ իրեն մեր-
ձաւորներէն ջանացաւ երբեմն զայն
բողբոզիւն ծածկել: Այս միջոցիս էր որ
էջուստս հաճեցաւ իմ աղջկիս բը-
ժշկել մէկ մեծ ցաւէ, այն է պսոսա-
ուական վէրքէ մը (fistule lacrymale) որ Յ
տարի և կէս այնպիսի կերպով մը ճառ-
րակեցաւ, որն որ թարախը ոչ թէ միւ-
այն աչքէն՝ այլ և բթէն և բերնէն
կ'ելէր, որուն համար ամենաճարտար
վիրաբոյժները անբժշկելի է կ'ըսէին.
ասկայն մէկ վայրկեանի մէջ բժշկուեցաւ
առ բոլորով մը շինամբ. և այս հրաշքը
այնչափ վաւերական դարձաւ, որ ա-
մէնքը կը խոստանովանէին, ամենայնեւ բը-

ժիշկներ և Գաղղիայի ամենաճարտար
վերաբոյժները կը վկայէին, և եկե-
ղեցւոյ վաւերական վճռով եւս հաս-
տատեցաւ :

Եղբայրս շատ մեծ աւրախութիւն
զգաց Տիրոջ այս շնորհքին համար, զոր
իրեն ըրած կը համարէր : Արովհետեւ
այս ցաւը այնպիսի անձի մը վրայ էր,
որ բաց ՚ի ազգակցութենէ՝ իրեն հո-
գեւոր զաւակն էր միրտութեան,
ուստի իւր մօտեցարութիւնը ևս մեծ
եղաւ, տեսներով որ Աստուած՝ այսքան
յայտնի կերպով ինքզինքը կը յայտնէր
այնպիսի ժամանակի մը մէջ, ուր հա-
ւատքը ժողովրդեան մեծ մասի սրբ-
տին մէջ բոլորովին մտրած կ'երե-
ւէր : Այս ուրախութիւնը այնքան
մեծ եղաւ, որ եղբորս որով խոր-
քը թափանցեց, եւ Աստուած անոր
ժողովն ներշնչեց զարմանալի խորհրդ-
դոծութիւններ հրաշից վերայ, որ իր
կրօնական գաղափարը աւելի լաւազը-
ւեցաւ եւ կրկնապատկեց այն սէրն ու

յարգանքը՝ զոր միշտ ունէր դէպ 'ի
կրօնն ։

Եւ այս առթիւ անոր մէջ անհուն
բողձանք մը ծնաւ շարունակ աշխա-
տիլ անասուածներուն գլխաւոր եւ
ամենաթիւր կտոր իքներն ու ճարտար-
մշտութիւնները հերքելու . մեծ եւ
աւանդով կը քննէր հակառակորդաց
յառաջբերութիւնները , և իւր բոլոր
ուշադրութիւնը դարձուցած էր մի-
ջոյներ գտնել զանոնք՝ համոզելու ,
ինքզինքը բոլորովին այս աշխատու-
թեան տուած էր ։

Իւր աշխատութեանց վերջին տա-
րին բոլորովին 'ի գործ դրաւ այս նիւ-
թիս վրայ զանազան խորհրդածութիւ-
ներ հաւաքելու . սակայն 'ստուած՝
որ իրեն այս նպատակը և իրեն բոլոր
մասածութիւնները ինքնին ազգած էր ,
չուզեց որ նա՝ այն նպատակը 'ի կա-
կնատար հասցունէ , որուն գաղտնիքը
անհատ է մեր մտքէն ։

Սակայն աշխարհէն հեռանալը զոր

քննութեան առած էր, չէր կարող
արգիլել զինքը երևելի և հանձարեղ
անձինք տեսնելու, որոնք աւանձնու-
թեան այս դիտաւորութիւնները ու-
նենալով՝ իւր կարծիքը կը հարցանե-
ին և ճշգումթեամբ անոր կը հետեւ-
էին, և ուրիշները՝ որոնք հաւատքի
վրայ մարտնչու ունէին, գիտնալով որ
եղբորս միտքը շատ բարձր էր, կու-
գային անոր խորհուրդ հարցնելու,
և միշտ գոհ կը դառնային. այնպէս
որ այն բոլոր անձինքը՝ որոնք հիմու
կ'ապրին քրիստոնէական կեանքով, կը
վկայեն որ անոր խորհրդոց, առած
տեղեկութեանց և բացատրութեանց
պարտական են իրենց ամեն բարեք
կենցաղովարութեամբ. Վանախօսու-
թիւնները ուր զինքը շարունակ կը
հրաւիրէին, թէպէտ և բազմն ալ
Վասուածափրութիւնը նպատակ ու-
նէին, սակայն քանի որ հոն գտնուե-
լու ըլլար, առանց վտանգի գուրա չեւ-
ջելու երկիւզք իրեն մէջ կը կրէր, և ս.

որսվհետեւ խիղճը իրեն թող չէր տար
մերժել մարդկանց օգնութիւնը զոր
իրմէ կը խնդրէին, ասոր համար ալ
ուրիշ հնարք մը գտած էր:

Ի ներքուստ մարմնոյն վրայ՝ սլա
քաւոր երկաթէ դօտի մը կը գործա
ծէր, և երբ քանի մը սւնայն մտած
մունք գալու ըլլար, կամ զուարճու
թիւն զգար այնտեղ ուր կը գտնու
ւէր, կամ ասոնց նման բաներ պատու
հէր, արմուկի հարուածներով կը կրկ
նապատէր սլաքի հարուածոց ստաւ
կութիւնը, և այս կ'ընէր իր պարտա
ւորութիւնը չք մտնալու համար: Այս
կիրառութիւնը իրեն այնքան օգտու
կար երեւեցաւ, որ մինչեւ իւր մահը
պահպանեց. և իւր կենաց մինչեւ վեր
ջին իսկ վայրկեանը, ուր շարունակեալ
ցաւոց մէջ էր, որսվհետեւ սչ գրել և
սչ կարգալ կարող էր, ստիպուած էր
գափարկ մնալ և զբօսանքի երթալ: Աս
բունակ կը վախնար որ անզբաղ կեան
քը՝ զինքը իրեն նպատակէն չք հեռու

քրնէ : Սենք այս ամեն բաները ի
րեն մահուանէն յետոյ գիտցանք ա
ռաքինի անձէ մը՝ որուն վրայ մեծ
վասահութիւնն աւնէր և որուն պարս
ասուքուածէր ըսել ամեն բան տրտա
ճառները բացատրելով :

Այս կենաց խստութիւնը՝ յառաջ
կուգար այն մեծ սկզբունքէն զոր իրեն
վրայ կը գործադրէր, այսինքն հրաժա
րիլ ամեն հեշտութիւններէ, որովհե
տեւ այս սկզբունքի վրայ հիմնած էր
իրեն կենաց բոլոր կանոնը : Իւր մե
նակեցութեան սկզբնաւորութենէն՝ ի
վեր միւս սկզբան գործադրութեան
մէջ եւս թերի չէր մնար, որ զինքը կը
ստիպէր բոլոր ունայնութիւններէ հը
րաժարիլ. վասն զի այնքան ջանադիր էր
բոլոր անսգուտ բաները նաւապեցու
ցանել, որ կամաց կամաց իրեն սենե
կին մէջ օթոց կամ գորգ մ'ալ չէր
գունաւէր, որովհետեւ կը հաւատար
ար ասիկա փարեւոր բան մը չէր. նոյն
խիւ վայելչութեան համար ստիպուած

չէր ունենալ, բանզի իւր մտտ մխմխայն
իրեն մարդիկը կուգային, որոց ձեռ-
քով միշտ կը պակսեցնէր իւր սենեկի
կահ կարասիքը, Այնպէս որ անոնք եր-
բէք շէին զարմանար անոր այն տեսակ
ապրելուն վրայ և զոր ուրիշներուն ևս
չորդոր կը կարգար ՚ի գործ դնել:

Ահա հինգ տարուան անցուցած
կեսիքը, երեսուն տարեկանէն մինչև
երեսուն և հինգ, անգագար աշխու-
տելով ՚ի փառս Աստուծոյ, յագուտ ըն-
կեցին և իրեն անձին, ջանարով ևս բան
ղևս գինքը կատարելագործել. և կարող
է մարդ ըսել թէ՛ այս է բողոք ժամանակ
կը որուն մէջ նա ապրեցաւ, որովհե-
տեւ վերջին շորս տարին զոր Աստուած
յեւոյ իրեն տուաւ, ուրիշ բան չէր՝
բայց եթէ միշտ և նեղութիւն, իւ-
նեցած հիւանդութիւնը նոր պատա-
հած հիւանդութիւն չէր, այլ մեծ
տկարութեան մը կրկնութիւնն էր,
որուն ենթարկուած էր իրեն պատա-
նեկութենէն, բայց այս միջոցիս այն:

չտի ստատկոցաւ, որ վերջապէս զանկ-
կա ընկձեց և բողոր շրջանիս մէջ նա
մէկ վայրկեան չք կրցաւ աշխատիլ այն
գործին, զոր ձեռնարկած էր կրօնին
համար, և ոչ «գնել սնունց՝ որոնք ի-
րեն կը դիմէին խորհուրդն ու կարծիքը
հարցանելու, ոչ բերանով և ոչ գրով,
որովհետեւ իրեն չարչարանքը այնքան
չատ և սաստիկ էր, որ չէր կրնար ու
նոնց հետաքրքրուածիւնը յագեցուցաւ
նել, թէպէտ և շատ կը բաղձար:

Իւր հիւանդութեանց այս նորո-
գութիւնը ատամնացաւով մը սկսաւ,
որ անորմէ քուն ըսածդ բողորովին բար-
ձաւ. իւր մեծ տքնութեանց մէջ գի-
շեր մը աննպատակ մտածութիւն մը
անիւի տաղարկութեան վրայ միտքը
եկաւ: Այս մտածմունքը սերիշ մը հե-
տեւեցունելով, և ասոր ալ դարձեալ
ուրիշ մտածում մը յաջորդելով, այսպէս
մտածութեանց բազմութիւն մը որք
իբարու ետև հեռագհետէ յաջորդեցին,
պարզեցին անոր գրեթէ ակամայ այս

ամեն բաներու յւժու մը և պատճառները, որուն վրայ ինքը եւս շատ զայր մտցաւ : Իշև որովհետեւ երկար ժամանակ կար որ նա իրեն հմուտ թիւնները շարունակելէն դադարած էր և այս պատճառաւ շուղեց որ միւսնակ զանոնք գրէ, այլ պատեհ ժամանակաց մէջ մէկուն պատմելով, որմէ շատ կ'ակնածէր, ամենայն յարգանօք և երախտագիտութեամբ, որով կը պատուէր զայն. այս անձը՝ որ իւր բարեպաշտութեամբ այնքան նշանաւոր էր որքան իւր մտաց պատուական ձրիւքն ու աղնուատոհմ ըլլալովը, կազմեց և յարդարեց մի ծրագիր, որ միայն Ատուծոյ փառացը կը վերաբերէր. և այս անձը քուսաւ յարմար ժամանակ որ զայն գործածեց ինչպէս որ շինուած էր, և յետոյ զայն տպելաւաւ : Սակայն թէ գրութիւնը և թէ տպագրութիւնը կատարուեցաւ չտեսայաւ :

Իսկ այց իւր հիւանդութիւնները՝ աւ

աանց զինքը մէկ վայրկեան հանգիստ
թողելու, ստիպեցին զինքը նաեւ, ինչ
պէս որ տառաջ ըսինք, երբէք չաշխատիլ
և գրեթէ ոչ ոքի հետ ալ տեսութիւն
չէր կրնար ընել: Եթէ հասարակաց և
մասնաւորաց ծառայութիւն մատու-
ցանելու արգիլուեցաւ այս տկարու-
թեանը ստթիւ, այնու ամենայնիւ
երբէք իրեն համար անօգուտ չեղան
նորս, և ինքը այնքան հանգարտութիւ
և համբերութեամբ տարաւ անսնց,
որ կրնանք ըսել թէ Լյուտուսի ինքը
այսպէս տնօրինեց և այն վիճակի մէջ
դրաւ որով պիտի իրեն ներկայանար,
որովհետեւ այս երկար հիւանդու-
թեան միջոցին երբէք անիկա իւր նը-
պատակէն չը խտտորեցաւ, միշտ իւ-
րեն մտքին մէջ ունենալով այն եր-
կու մեծ սկզբունքները, այն է հրա-
ժարիլ բոլոր զուարճութիւններէ և
ամեն ունայն բաներէ: Լյու սկզբունք-
ները իւր ամենախիստ ցաւին մէջ ան-
գամ մէկ շարունակեալ արթնալ թը

կը դործագրէր իւր զգայարանաց վըրայ, և կը զրկէր զանոնք ամեն հաճելի առարկաներէ, եւ հարկը ստիպած ժամանակ անգամ սքանչելի ճարտարամտութեամբ զանցառութեան կը տար հեշտարար գործքերը: () րինակի համար, իւր ցաւերը զինքը վիափկութեամբ ապրելու կը ստիպէին, սակայն ինքը մեծ հոգ կը տանէր կերակուրները չը խտրել, և մենք որչափ կ'աշխատէինք աղէկ միտ վնասել իւր ախորժակը բանալու, սակայն օր մը չը սաւ թէ ահա սոյս լաւ է, և դարձեալ եղանակին յարմար նոր պտուղ կամ ուտելիք մը կը տայինք, եթէ ուտելէն վերջը հարցնէինք թէ ինչպէ՞ս էր, պարզութեամբ մը կը պատասխանէր՝ պէտք էր որ առաջ հարցանէիք, կը խոստովանիմ որ բնաւ չը նկատեցի. և երբ կը պատահէր որ մէկը իրեն ներկայութեանը ինչ և իցէ մտի մը աղէկութեանը համար զարմանք կը ցուցնէր, չը կրնալով անոր համբերել և կամ լռել, մարմնա-

սեր կը կոչէր զանիկայ . թէպէտ և ա-
նոնք սովորական բաներ են , բայց նա
կ'ըսէր թէ՛ ասիկա մէկ նշան է որ մար-
դիկ կերակուր կ'ուտեն իրենց քիմքը
գոհացնելու , որ միշտ վատու թի համա-
րուած է : Այս բանիս մէջ չիյնալու
համար , թոյլ չէր տար որ իր կերա-
կուրը համեմներով պատրաստեն , և
կամ նարնջով կամ ազոխաջրով որ կըր-
նար իւր ախորժակը գրգռել , թէպէտ
և բնականապէս այս ամեն բաները կը
սիրէր :

Այս կանոնաւորեալ սահմաններուն
մէջ ինքզինքը հաստատելու համար ,
իրեն առանձնութեան սկզբնաւորու-
թենէ ՚ի վեր զգուշացած էր ստամոք-
տի կողմէն , և ուտելու բաները կանոնի
տակ դրած էր , այնպէս որ , ինչ ախոր-
ժակ որ ունենար՝ երբէք կանոնէ չէր
եղնէր , և ինչ բանի որ ախորժակ չու-
նէր՝ անկէց եւս պէտք էր որ ուտէր ,
և երբ իրեն անոր պատճառը կը հար-
ցունէին թէ ինչո՞ւ ինքզինքը կը ստի-

պէր սցոպէս , կը պատասխանէր , որ այս ստամոքսի անհրաժեշտ պիտոյքն է որ պէտք է տրուի և ոչ թէ ստամոքսը հաճեցնելու է :

Իւր զգայարանքները կը ճնշէր ոչ թէ միայն անոնց հաճոյ եղած բաներէն զրկելով , այլ և անհաճոյ եղածները չը մերժելով , ինչպէս էին թէ՛ կերակուրներ և թէ՛ դեղեր : Չորս տարի սցոպէս իւր հաշմուժեան մէջ անցունելով , երբէք ամենափոքր տժգոհութիւն մը ցոյց չը տուաւ կերակուրի մասին . և իրեն առողջութեան համար ինչ դժուար բան որ առաջարկէին , տուանց դժուարութեան կը կատարէր . իսկ երբ ես ասոր զարմանք կը ցուցնէի , զիս ծաղը ընելով կ'ըսէր՝ թէ չեմ իմանար մարդ ինչպէս կրնայ հակառակ կամք ցոյց տալ , մինչդեռ դեղը կամաւ կ'ընդունի , և կամքը ուր կը մնայ եթէ բռնադատուած ընէ այս գործը : Այս եղանակաւ ահա շարունակ կ'աշխատէր ճնշել ինքզինքը :



Աղքատութիւնը այնքան շատ կը սիրէր, որ շարունակ կարծես թէ իրեն աչքին առջեւն էր, այնպէս որ երբ գործի մը ձեռք զարնել կ'ուզէր, կամ թէ մէկը իրեն խորհուրդ մը հարցունելու ըլլար, առաջին մտածմունքը այս էր՝ որ իրեն միտքը կուգար, տեսնել թէ աղքատութիւնը կրնա՞ր 'ի գործ դրուիլ: Այն ամեն խորհուրդներէն, զորս շատ կը յեղյեղէր իւր մտքին մէջ, մին այս էր որ՝ կ'ուզէր ամեն բանի մէջ երեւելի հանդիսանալ, օրինակի համար ընտիր արհեստաւորաց բոլոր ձեռագործները գործ դնել, և այլ ասոնց նման ուրիշ բաներու լը դարձեալ շատ դժկամակութիւն ցոյց կուտար որ մարդիկ ամեն բարեկեցութիւն կ'որոնեն. զոր օրինակ ամեն բան կ'ուզեն ունենալ, և ուրիշ հազարաւոր բաներ կ'ընեն առանց մտածելու որ շատ չարիքներ կրնան պատահիլ: Բայց ինքը այսպէս չէր դատեր, ինքը մեզ շարունակ կ'ըսէր

որ, չըկայ բնաւ աղքատութեան ու
գին շիջուցանելու կարող բան, որքան
դիւրակեցութեան հետաքրքիր խու-
զարկութիւնը, այն բաղձանքը՝ որով
կը փափաքին միշտ ունենալ լաւն և
գեղեցիկն. և մեզ կ'ըսէր որ արհես-
տականներուն համար՝ պէտք է որ
չարունակ աղքատ և ամենէն բարի
մարդիկը ընտրեն, և ոչ թէ վայելչասէր-
ները որոնք երբէք չեն կրնար օգտակար
ըլլալ: Արբեմն կ'աղաղակէր. « Աթէ
ես մտացս չափ աղքատ սիրտ մը ու-
նենայի, շատ երջանիկ կ'ըլլայի, վասն
զի համոզուած եմ բոլորովին, որ աղ-
քատութիւնը մեծ միջոց մ' է երջան-
կութեան հասնելու համար: Այս սէ-
րը՝ զոր ունէր առ աղքատութիւնն,
զինքը կը ստիպէր այնքան գորովանօք
սիրել աղքատները, որ երբէք ողոր-
մութիւնը չէր մերժեր. թէպէտ և ի-
րեն հարկաւորէն միայն կ'ընէր, թէ
քիչ հարստութիւն ունենալէն և թէ
այնպիսի ծախք մը ընելու ստիպուե-

լէն, որ իրեն հիւանդութեանց պատ-
ճառաւ՝ իրեն եկամուտէն կ'անցը-
նէր : Երբ նշանաւոր օղորմութիւն մը
ըրած ատենը այս յիշեցունել կ'ուզէ-
ինք, սրդողելով մը կ'ըսէր . « Ես գի-
տեմ՝ որ որ և իցէ աղքատ մը մեռնե-
լու ատեն բան մը կը թողու » : Եւս
պէս բերան կը գոցէր . և երբեմն այն-
քան սկսաւ տալ, որ ստիպուեցաւ դը-
րամ փոխ առնուլ, իրեն ամեն գոյքը
աղքատաց ընելու համար, չուզելով
այլ ևս իրեն բարեկամները թախսանձել :

Երբոր կառքերու անօրէնութիւն
եղաւ, ինձ ըսաւ որ վարձակալներէն՝
(որոնց հետ կը սակարկուէր, թէ որ
կարելի է միասին բնակին, որովհե-
տեւ իրեն ծանօթներն էին), կան-
խաւ 1000 Ֆրանք կ'ուզեմ պահանջել
Պլուլայի աղքատներուն ղրկելու հա-
մար : Եւ երբոր ես իրեն ըսի որ, դեռ
այս գործոյն համար ապահովութիւն մը
չի կայ, պէտք է ուրիշ տարուան մը ըս-
պասել, անմիջապէս այս պատառխանը

տուաւ. ինձ թէ, « Ես այս բանիս մէջ անպատեհութիւն մը չեմ տեսներ. եթէ անոնք կորսնցնեն, իմ լստացուածքէս կը հատուցանեմ. և թէ չեմ կրնար տարիմ՝ ալ համբերելի. ու որովհետեւ շատ ստիպողական կարօսութիւն մ' էր, և չէր կրնար յետաձրգուիլ: Եւ որովհետեւ մարդիկ չը կամեցան միասին բնակիլ, այս պատճառաւ չը կարաց 'ի գործ դնել իւր մտաց այս որոշումը, որով մեզ տեսնել կուտար այն ճշմարտութիւնը՝ զոր այնքան մեզ կը կրկնէր, թէ ինքը թշուառաց ձեռնտուութիւն ընելու համար միայն կը փափաքէր հարստութիւն ունենալ. որովհետեւ միւսնոյն ժամանակ որ Լստուած յոյս մը կուտար իրեն բան մը ձեռք բերելու, տակաւին նոյն իսկ անոր վրայ ապահովութիւն չունեցած, կանխաւ կրսկրսէր զայն բաշխել:

Իւր ողորմածութիւնը՝ զոր ունէր առ աղքատս, միշտ զօրաւոր մնաց.

բայց մանաւանդ այնքան կրկնապատկեցաւ իւր կենաց վերջերը , որ առանց անոր վրայ շարունակ իրեն հետ խօսակցելու չէի կրնար զինքը գոհ ընել : Չորս տարիէն 'ի վեր մեծ զգուշութեամբ զիս կը քաջալերէր աղքատաց ծառայութեանը նուիրելու ինքզինքս և հոն առաջնորդել իմ զաւակներս :

Եւ երբ իրեն կ'ըսէի թէ , « կը վախնամ որ ասիկայ յետոյ զիս ընտանեացս խնամքներէն կը խօտորցունէ » , ինձ կը պատասխանէր թէ՛ անիկայ հաստատուն կամաց պակասութենէն յառաջ կուգայ , և թէ զանազան եղանակաւ կրնայ մարդ այս սուսքինութիւնը գործ դնել , այնպէս որ մարդ առանց իւր ընտանեկան գործոց փոքրիկ վնաս մը հասցունելու , կրնայ արժանաւորապէս իւր կարողութեանցը համեմատ ողորմութիւն ընել :

Նաև կ'ըսէր որ Քրիստոնէից ընդհանուր կոչումն է ասիկայ , և թէ մասնաւոր գատողութեան հարկ չէ

կայ գիտնալու թէ արդեօք մարդիկ
դէսլ ՚ի այն կոչուած են . վասն զի այս
ստոյգ է որ Վրիստոս մեր Փրկիչը ա
սով զաշխարհ պիտի դատէ . և թէ
մարդ մտածէր որ միայն այս առսքիւ
նութեան զանցառութիւնը մեր դա
տապարտութեանը պատճառ կ'ըլլայ ,
այս մտածութիւնը միայն՝ եթէ հա
ւատք ունենայինք , բաւական էր զմեզ
ամեն բանէ կողոպտելու աստիճանին
հասցնել : 'Իարձեալ մեզ կ'ըսէր թէ՝
« Դքատաց մօտ յաճախելը անհուն օ
գուտներ ունի , տեսնելով այն թշուա
ռութիւնները որոց ենթարկուած են
նոքա , և նոյն իսկ իրենց հիւանդու
թեանց սաստկութեան մէջ ամենակա
րեւոր հարկաւորութենէ զուրկ . ա
հա այս ամենը տեսնալէն յետոյ անըզ
գայ պէտք է ըլլայ մարդ , որ ինքզին
քը չը զրկէ անօգուտ հաճոյքներէ ,
վայելքներէ և աւելորդ հոգերէ » :

Այս խօսքերը սյնքան կը գրգռէր
զմեզ որ երբեմն կ'առաջադրէինք հա

տարակաց չքաւորութիւնը կամ կարօտութիւնը լեցունելու համար ընդհանուր օրէնք կամ կանոններ շինել մէջերունիս, սակայն եղբայրս ասոր հաւանութիւն չէր տար, ըսելով թէ մեք մասնաւորի կոչուած էինք, և ոչ թէ ընդհանուրի. և թէ՛ ինքը այնպէս կը հաւատար որ Աստուծոյ առաւել հաճելի է աղքատաց ծառայութիւն մատուցանել աղքատօրէն, այսինքն իւրաքանչիւր մարդ իւր կարողութեան համեմատ, առանց ինքզինքը այն մեծամեծ նպատակներուն ոգւով ներկայացնելու, որն որ այն աւելազանցութենէն յառաջ կուգայ, որուն հետադօտութիւնը ըստ ամենայնի կը պարսաւէր. Այսպէս խօսելով ոչ թէ իրեն միտքն այն էր որ հասարակաց համար աղքատանոցներ հաստատելը մնասակար է, ընդ հակառակն ասոր համար մեծ սէր ունէր, ինչպէս տեսնուեցաւ իրեն ըրած կտակէն. այլ կ'ըսէր թէ այնպիսի մեծամեծ ձեռնար-

կութիւնները քանի մը անձանց յառ
կացեալ էր, զորս Մատուած գրեթէ
աներեւութապէս դէպ 'ի այն կ'ա-
ռաջնորդէ, և ոչ թէ ամեն մարդկան՝
ինչպէս հանապազօրեայ և մասնաւոր
օգուտները որք կ'ըլլան աղքատաց :

Մհաւասիկ մէկ մասն է ասիկայ այն
կրթական դասերուն, զոր մեզ կ'ա-
ւանդէր այս առաքինութեան գոր-
ծադրութեան հրաւիրելու համար,
առաքինութեան՝ որ իւր սրտին մէջ
մեծ տեղի մը ունէր, և այս փոքր օրի-
նակ մ' էր, որ մեզ տեսնել տուաւ
իւր մարդասիրութեան մեծութիւնը :
Իւր սրբութիւնը կամ անմեղութիւ-
նըն ալ փոքր բան մը չէր, և այնքան
կը յարգէր այս առաքինութիւնը, որ
կըզգուշանար շարունակ թէ չլլայ որ
կամ իրեն մէջ և կամ ուրիշներուն վի-
րաւորի այն, և անհաւատալի է իրեն
այս նպատակին համար ունեցած ճշգ-
դութիւնը : Մտր վրայ նոյն իսկ ես
վախի մէջ էի, որովհետեւ ամեն խա-

սածներս կը ստգւտանէր զորս ես անմեղ
 կը կարծէի, և որոյ սխալ ըլլալը յետոյ
 ինձ կը ցուցընէր: Եթէ պատահամաք
 երբեմն ըսէի թէ այսօր գեղեցիկ կին
 մը տեսայ, բարկանայով կ'ըսէր ինձ թէ՛
 պէտք չէր երբէք սպասուորաց և ե-
 րիտասարդ անձանց առջեւ այդպիսի
 խօսքեր ընել, իսկ ես չէի իմանար թէ
 ասով ինչ մտածու թիւն կրնայի գրգը-
 ռել անոնց մէջ: Կը դժգոհէր նա դար-
 ձեալ այն գրգանայ համար, զոր իմ
 զաւակներէս կ'ընդունէի, և կ'ըսէր որ
 ասիկայ անոնց մնասակար ըլլալէ զառ-
 օգուտ չունի, և թէ մարդ կրնայ ու-
 րիշ հազար տեսակ միջոցներով սէր ցոյց
 տալ իւր զաւակաց, ուստի զիս կը
 յորդորէր որ այս սովորու թիւնը ջըն-
 ջեմ: Ես ո՛րք ե՛ն ահա այն բարձր դա-
 սերը զորս ինձ կուտար, և ահա այս-
 քան արթուն կը հսկէր անմեղութեան
 վրայ թէ՛ իրեն և թէ ուրիշներուն մէջ:
 Եղբօրս մահէն երեք ամիս գրեթէ
 առաջ իրեն դէպք մը պատահեցաւ, որ

անոր ամենազգալի տպացոյցն եղաւ , և միևնոյն ժամանակ եղբօրս սքանչելի ուղորմածութեան մեծութիւնը տեսնուեցաւ : Այրք եղբայրս պատարագէն կը վերադառնայր , տասն ու հինգ տարեկան խիստ գեղեցիկ օրիորդ մը իւր մօտ եկաւ ողորմութիւն խնդրելու , այսպիսի սրտաշարժ տեսարանէ մը եղբօրս սիրտը շարժեցաւ տեսնելով այս ազգատուհւոյն այսպիսի վտանգի մը ենթարկուիլը . յետոյ հարցուց անոր ով ըլլալը , և այն ստիպողական պատճառը , որով ողորմութիւն խնդրելու եկած էր . և երբ իմացաւ որ նա գեղը կը բնակի եղեր , իւր հայրը մեռեր է և թէ մայրն ալ հիւանդանալով այն օրը եկեղեցւոյ հիւանդատունը տարուէր է , հաւատաց որ Աստուած էր որ զասիկայ իրեն առաջին կարօտութեան մէջ իւր մօտ զրկած էր անոր օգնութիւն մը ընելու . և նոյն ժամէն անմիջապէս տարաւ օրիորդը գիշերօթիկ վարժարան , ուր բարի քահանայի

մը յանձնելով, և սրբան որ պէտք էր արժաթ տալով աղաչեց անոր խնամ տանել, և դնել զայն ապահով վիճակի մը մէջ, ուր կրթուի օրինաւորապէս իւր երիտասարդութեան պատճառաւ : Այս բոլոր հոգը քահանային վրայ չք թողլու համար, ըսաւ անոր որ վաղը առաւօտ քեզ կին մը կը զրկեմ, որքին հագուստները գնելու և հոգալու իրեն հետ այն ամեն կարեւոր բաները, որով օրիորդը այնպիսի վիճակի մէջ մտնէ, որ կարողանայ ծառայել վերակացու հւոյ մը : Առաւօտեան զըրկեց եղբայրս կին մը որ այս բարի քահանային հետ աշխատելով և անոր հագուելիք բաները շտկելով զինքը օրինաւոր և վայելուչ վիճակի մը մէջ դրին : Այս եկեղեցականը՝ կնոջմէն այս մարդասիրութիւնը ընողին անունը հարցնելով, կինը անոր ըսաւ՝ որ հրաման չունէր յայտնելու, միայն թէ երբեմն երբեմն պիտի գար ինքը օրիորդին պիտոյից հոգացողութեանը

մասնակցելու, որով քահանային հետաքրքրութիւնը աւելցաւ. նա աղաչեց կնոջը. որ անոր անուներ իրեն ըսելու շնորհք ընէ. « Եւ ձեզ խօսք կուտամ կ'ըսէր քահանայն, թէ քանի որ այն մարդը կենդանի է՝ այս իրողութիւնը չեմ յայտներ, և եթէ Աստուծոյ տնօրինութեամբը ինձմէ առաջ նա մեռնի, սլիտի ունենամ այսպիսի գեղեցիկ գործ մը հրապարակելու միտքութիւնը. ես չեմ ուզեր որ այս գործը մոռացութե՛ք դատապարտուի » : Այսպէս ահա այս դիպուածովը այն բարի քահանայն առանց եղբայրս Ճանաչելու կը տեսնէր թէ որչափ հիանալի է անոր մարդասիրութիւնը և անմեղութեան համար ունեցած սէրը :

Եղբայրս շատ գորով և սէր կը ցուցնէր նաեւ մեզ, տակայն չսփառանց չէր այս, և այս աւելի յայտնի ըրաւ քրոջս մահուամբը, որ տասն ամիս իր մահուանէն յառաջեց. երբ այս լուրը լսեց եղբայրս՝ միայն այս խօսքերը ը-

տաւ. « Թող Մատուած այնպիսի բարի մահուամբ կոչէ զմեզ առ ինքն » . և այսպէս միշտ հլու և հնազանդ էր Մատուծոյ նախախնամութեան օրէնքներուն, և միայն կը խորհրդածէր այն մեծամեծ շնորհաց վրայ, որով Մատուած ճոխացուցած էր քոյրս իր կենդանութեան ժամանակ, և յայտնի պարագաներով փայլեցաւ մահուան միջոցին : Ըստ համար էր որ անդադար կը կրկնէր. « Լըրանի անոնց, որոնք 'ի Տէր կը ննջեն » . և երբոր զլս այս կորստեան համար սաստիկ ցաւոց մէջ կը տեսնէր շարունակ, կը բարկանար և կ'ըսէր որ պէտք չէ երբէք արդարոյ մահուան համար այսպիսի զգացումներ ունենալ, և մանաւանդ պարտաւոր ենք զՄատուած փառաբանել այս մասին, որ այնքան վարձատրած էր քոյրս իր մատուցած փոքրիկ ծառայութեանց փոխարէն .

Լըբայրս մեզ ցոյց կուտար այսպէս, որ ինքը՝ ոչ մէկուն հետ անբակ-

տելի կապ մը չունի, թէպէտ և իւր սիրելիները ըլլան, ինչպէս էր քոյրս, զոր աշխարհիս վրայ ամենէն շատ կը սիրէր։ Իսկ այս չափով ալ գոհ չէր ըլլար, այլ ինքը շունենալէն զկնի, չէր ուզեր ամենեւին որ մէկը այդպիսի չափազանց սիրոյ կապ մը դէպ 'ի իւր անձը ցուցնէ։ Խօսքս այն մեղանչական և վտանգաւոր կապերուն վրայ չէ, ուր զվճետեւ այս՝ աշխարհ ամենայն յայտնապէս կը տեսնէ, այլ՝ ամենէն անմեղ բարեկամական միութեան՝ զոր և կանոնաւորապէս ունել կը բաղձար, որպէս զի առիթ մը չը տայ այդ մասին, և մանաւանդ արգիլէ. և որովճետեւ չէի իմանար ես թէ ինչ միտք ունի ասիկայ, ուստի բոլորովին զարմացած էի այն քանի մը ինձ ըրած մերժմանց վերայ, որոնց համար գանգատանօք կ'ըսէի թէ՛ «Եղբայրս զիս չը սիրէր և կարծես թէ իրեն ձանձրութիւն կը պատճառեմ՝ նոյն իսկ այն ժամանակ՝ երբ իւր հիւանդութեան մէջ իմ սիրայօժար

Տարույաւ թիւններս կը մատուցանեմ
իրենդ : 'Քյրա' չափազանց կը սխալեք
կ'ըսէր ինձ, և ընդ հակառակն կը հաւ
տաստէր որ այնքան մեծ սէր ունէր առ
իս, որքան ես կրնայի բաղձալ : Այս
պէս ահա քրոջս ըրած դատողութեամբ
բը իմ միտքս ալ կը հանդարտէր, և այ
նուհետեւ շուտով սկսայ նշմարել նորա
սիրոյ ապայոյցները, սրովհետեւ երբ
տախթ մի կը պատահէր, սրուն համար
եղբորս օգնութեան պէտքը կը դգայի .
իսկոյն ամենայն սիրով կ'ընդունէր, և
այնքան փութով կը կատարէր, որ երբ
բէք ինձ տեղի չէր մնար կասկածելու
թէ նա զիս չը սիրէր, այնպէս որ իւր
հիւանդութեան և նեղութեանը կը
տայի այն սրաղ ընթացքը, զոր միշտ
ուներցած էի զինքը չը ձանձրացունե
լու համար : Ինչպէս առեղծուածք
մինչև իւր մահուան սրը անլուծանե
լի մնաց ինձ, զոր յետոյ բացատրեց անձ
մը՝ թէ բարեպաշտութեամբ և թէ
մտաց ձիրքելով նշանաւոր, որուն

հետ եղբայրս մեծ հազորդ անցու թիւն
ներ աւնէր առաքինութեան գործա-
դրութեան մէջ . Այս անձը մեզ պատ-
մեց որ ինքը շատերու հետ նաեւ այս
կրթութեան դասն ալ առած էր անօրմէ
թէ՛ մարդ թող չը պիտի տայ դիմացի
նին , սվ որ ալ բլայ , զինքը չափազանց
սիրով սիրէ . և թէ՛ այս թերութիւն
մ՛ է , որուն մարդիկ բաւական աւշա-
դրութիւն չեն ընծայեր , և որուն մե-
ծութիւնը իրենց նշմարելի չէ . եւ չեն
մտածեր որ պնպիսի սէր մը իրենց մէջ
տածելով , սիրտ մը կը գրաւեն որ պէտք
էր բլայ միայն Աստուծոյ , և այս գողու-
թիւն մ՛ է որ անօր ամենէն թանկագին
սեպհականութիւններէն կը գողցուի :

Անք յետոյ խիստ բաւ նշմարեցինք
որ այս սկզբունքը շատանց ՚ի վեր ա-
նոր սրտին մէջ կայ , որովհետեւ իրեն
յատուկ ձեռամբը առանձին թղթի
մը մէջ այս խօսքերը գրած էր , « Ան-
բաւուր թիւն է մարդկանց իրարու սի-
րով յարեց . թէպէտև կամօք և հա

Ճուրթեամբ բրած ըլլան . կրխարեմ
այն անձինքը՝ որոց մէջ այս իղձը կը
ծնուցանեմ, որովհետեւ ես ոչ մէկու
վախճանը չեմ, և չեմ կրնար զանիկայ
գոհացնել կամ փոխարէնը հատուցա-
նել : Սթի է ես մահկանացու չեմ, ասով
իրենց յարելու առարկան կը մեռնի
ուրեմն : Սրբան յանցաւոր կ'ըլլայի
այս ստուծիւնը հաւատացնելու և հա-
մար, թէ պէտք քաղցր համոզումներով,
այնպէս որ ամեն մարդ ուրախուծք
ընդունելով զայն՝ ինձ ալ ասով բերկ-
րուծիւն պատճառէին : Այնպէս յան-
գաւոր եմ, եթէ ես զիս սիրել տալու
ջանամ և յանկուցանեմ մարդկան սրբ-
տերը գալ ինձ յարելու : Այս պարտա-
ւոր եմ զգուշացնել ամեն անոնք՝ ո-
րոնք պատրաստ են հաւանելու այս
ստուծեանը, թէ պէտք չէ անոր հա-
ւատան , ինչ օգուտ ալ որ գայ ինձ
անկից : Այլ նմանապէս պարտաւոր չեն
ինձ յարիլ, որովհետեւ իրենց բոլոր
կեանքը և տքնուծիւնները պիտի ըլ-

լան հաճոյանալ Աստուծոյ և զայն սրունելո :

Ահա տես ինչ եղանակաւ կը կրթութիւն ինքզինքը և ինչպէս գործադիր կը հանդիսանար այս կրթութեան , ուրուն ես անտեղեակ ըլլալով , խաբւած էի ինքնին չարաչար : Ահա իւր կիրառութեանց այս ցոյցերէն կամ նշանակներէն՝ որոց դիպուածով միայն ծանօթացանք, կը տեսնուի իւր վրայ այն հազուագիւտ ձրից և շնորհաց մէկ մասը , զոր Աստուած քրիստոնէական կենաց կատարելութեան համար անոր կը տար :

Այլըստիս՝ Աստուածային փառաց այնպիսի մեծ նախանձաւորութիւն մը ունէր , որ չէր կրնար զսպել իւր արդարացի բարկութիւնը ամեն անոնց դէմ, որոնք զայն աղարտելու կը ժպրհէին , ով որ ալ ըլլար : Սա էր որ իր եռանդը կը բազմապատկէր թագաւորին եւս ծառայելու , որ դէմ կը դընէր ամենուն Փարիզի խռովութեան

ժամանակ, և այնուհետեւ Պարոտայի
կը կուչէր այն ամեն իրաւունքները,
զորս այս ապստամբութեան կուտային
և մեզ միշտ կ'ըսէր. « Պետութեան
մը մէջ, ուր հասարակապետութիւնը
հաստատուած է, ինչպէս Վենետիկ,
Թագաւոր մուծանել ջանալը՝ թեթե-
ւամտութիւն է, և շատ չարիքներ
կրնայ արտադրել, վասն զի ժողովրդոց
ազատութիւնը կը բռնաբարեն, զոր
Վստուած տուած է անոնց, Վստ-
նապէս եթէ պետութեան մը մէջ մի-
ադետութիւն հաստատուած է, կա-
րող չէ յափշտակել անկէց ոչ ոք այն
յարգանքը զոր կը պարտի մատուցա-
նել անոր, առանց սեղանակապտութե-
մէկ տեսակը յանձն առնելու իրեն
վրայ, զոր կը գործէ. վասն զի Թագա-
ւոր մը՝ ոչ թէ միայն Վստուծոյ պատ-
կերն է, այլ և անոր իշխանութիւնը
նայն իսկ Վստուծոյ ամենակարող իշխա-
նութեան մէկ կցորդութիւնն է, ո-
րունդեմ գնել անկարելի է, առանց ա-

ներեւութապէս Աստուծոյ հրաճանին
դէմ դնելու : Այլ ահա այսպէս մարդ-
կանց այս սխալանքը այնչափ մեծ է ,
զոր բանիւ յայտնելու չի գար , վասն
զի ասիկայ միշտ բնկերակցած է քաղա-
քական պատերազմի , որ մարդկանց՝
իրենց մերձաւորաց մարդասիրութեան
դէմ մեղանչելու նողկալի և ամենա-
մեծ տեսակն է : Ազգայրս այնքան ան-
կեղծութեամբ այս սկզբան կը հետե-
ւէր , որ այն ժամանակին՝ անոր մէջ
թերի չը գտնուելու համար , մեծ եւ
անթիւ շահեր զսկեց : Սովորաբար կ'ը-
սէր որ . « Այս այնքան հեռի եմ այս
յոնցանքէն , որքան մարդասպանու-
թենէ և կամ աւազակութենէ » : Այն-
չապէս ոչ ինչ իրեն բնութեան աւելի
հակառակ չէր , որքան ասիկայ :

Ասոնք են զգուցումները զորս ու-
նէր առ թագաւորն , և ասոնց մէջ
թերի գտնուողներուն դէմ ալ ան-
հաշտ էր , և այս՝ իրեն բնական բան
մը չէր և ոչ խալ սիրոյ ազգեցութի մը

յառաջ կուգար, որովհետև զարմա-
նալի քաղցրութիւն մը ունէր առ ամե-
նայն մարդիկ, որոնք մասնաւորապէս
իրեն անձին դէմ կը մեղանչէին: Այն-
պէս որ երբէք խտրուի չէր ըներ ասոնց
և միւսներուն մէջ, և շուտ մը բարորակ
կը մոռնար այն ամեն թշնամանքները,
որ իրեն դէմ եղած էին, մինչեւ ան-
գամ եթէ զայն իրեն յիշեցնել հարկ ըլ-
լար, բաւական աշխատութիւն և թէ
անոնց ամեն պարագաները խօսիլ
պէտք էր: Այլ երբ ասոր վրայ կը զար-
մանայինք երբեմն, կ'ըսէր մեզ թէ՝
«Ա՛յ զարմանաք ասոր երբէք, ասիկայ
առ երեսս բան մը չէ՛, այլ իրական
մոռացութիւն, որովհետև ամենևին
չէ՛մ յիշեր»: Այլ յիրաւի կը նշմարե-
ինք որ երբէք տպաւորութիւն չէր ը-
ներ իւր վրայ որ և իցէ նախատինք և
զրկողութիւն, որն որ իրեն անձին
դէմ եղած էր, վասն զի զանոնք շատ
դիւրութեամբ կը մոռնար, մինչդեռ
ինքը այնպիսի զօրաւոր յիշողութիւն

ունէր, որ շատ ժամանակ ըսած էր մեզ թէ՛ ոչ ինչ չեմ մոռանար այն աւմեն բաներէն, զորս միայն պահելու դիտաւորութիւն կ'ունենամ:

Այս քաղցրութիւնը պահեց մինչեւ վերջը, վասն զի իւր մահէն քիչ ժամանակ յառաջ թշնամօնք մը կրեց մէկ բանի մասին, որուն մէջ իր սիրտը շատ զգայուն էր, և այս ալ այնպիսի անձէ մը՝ որ մեծ երախտիքներ ընդունած էր իրմէ, և միւսնոյն ժամանակ մէկ ծառայութիւն ալ ըրած էր իրեն այս անձը, որուն շնորհակալ եղաւ այնքան մեծարանօք և քաղաքավարութեամբ որ չափազանց էր, թէպէտ այս մոռացութիւն չէր, որովհետև մի և նոյն ժամանակի մէջ եղաւ՝ բայց և այնպէս այս ապուցոյց մ'էր, որ եղբայրըս իրեն անձին դէմ եղած զրկանաց երբէք վրէժխնդրութիւն չունենալէ զինի, ներողութիւնը կատարեալ էր: Թողոր այս ձիրքերը՝ զոր մանրամասնաբար կը թուարկեմ, համառօտիւ կը

տեսնուին աւելի պայծառ այն նկատու
գրութեան մէջ զոր ինքնին յորինեց
փոքրիկ թղթի մը վրայ, զոր արժան
է յառաջ բերել:

“Կը սիրեմ ազգայնութիւնը՝ որով
հետեւ Յիսուս Քրիստոս սիրեց: Կը
սիրեմ ամեն բարութիւններ կամ հա-
րըստութիւններ, փան զի անոնք թըշ-
ուառաց օժանդակելու մէկ մէկ մի-
ջոցներ են: Կը պահպանեմ հաւատար-
մութիւն առ ամենայն մարդիկ: Կը-
բէք չարին չար չեմ հատուցաներ, այլ
կը մտղթեմ անոնց համար իմ ունե-
ցածիս նման փիճակ մը, ուր չեն ըն-
դունիր չար, և ոչ բարի մարդկանց
մեծ մասէն: Կը ջանամ միշտ ըլլուլ ան-
կեղծ, ճշմարտմասէր և հաւատարիմ
դէպ ՚ի ամեն մարդիկ: Կը սրտի գո-
րով մը ունիմ ամեն անոնց համար զոր
Մատուած ինձ հետ սերտ միացուց, թէ՛
առանձին և թէ ՚ի հրապարակի իմ բո-
լոր գործոցս մէջ Մատուծոյ տեսողու-
թիւնը կը հաւատամ ունենալ, որ պի-

տի դատէ զանոնք , և որուն բազմն ալ
արդէն անոր նուիրած եմ : Կաւասիկ
բողոք զգացումներս , և ես իմ կենաց ա-
մեն օրուան մէջ կ'օրհնեմ իմ Փրկիչս՝ որ
այս ամենը ինձ տուաւ , և որ տկարութիւն
թշուառութիւն , ցանկութեամբ , հպար-
տութեամբ և փառասիրութեամբ լե-
ցուն մարդէն կազմեց մարդ մը , որ ա-
զատ է այս ամեն չարիքներէն՝ այն շնոր-
հաց զօրութեամբ , որուն պարտական
եմ ամենայն ինչ . զի ինքիրմէս չունիմ՝
բայց միայն աղէտք և սոսկումն ։

Եւ յսպէս նա անձամբ ինքն իրեն նը-
կարագիրը բրած էր , որպէս զի շարու-
նակ իրեն աչաց առջեւ այն շաւիղը
տեսնելով որով Եստուած զինքը կ'ա-
ռաջնորդէր , չը կարողանայ երբէք ան-
կէց խտորիլ : Եւ յնչափ արտաքայ կար-
գի ձիրքերը միանալով իրեն մտքի մե-
ծութեանը հետ , չը զօրեցին ևս ար-
գելք ըլլալ անոր այն սքանչելի պար-
զասիրութեանը՝ որ նորա կենաց բո-
լոր մնացորդին մէջ փայլելով , զանի-

կա գործադիր կը հանդիսացնէր մե-
ծաւ ճշդութեամբ այն ամեն պարտա-
ւորութեանց որք կրօնի կը հային :
Սաստիկ սէր մը ունէր նաև առ Աստ-
ուածային պաշտամունս, մանաւանդ
'Իաւթի նուագները՝ որոց մէջ զար-
մանալի բաներ կը գտնար, իրեն բո-
լոր ուշք գրաւած էին, այնպէս որ
բերկրութիւն մը կը զգար զանոնք կրը-
կնելով, մանաւանդ 48 գլխոյն փոք-
րիկ սրտաշարժ տուները : Արբ նա իւր
բարեկամաց հետ Սաղմոսի գեղեցկու-
թեան վրայ կը խօսէր, այնպէս կը յա-
փշտակուէր մտօք, մինչեւ խելայեղ
երեւիլ դիմացիններուն . և այս մտա-
խոհութիւնը զինքը զգայուն դարձու-
ցած էր դէպ 'ի այն ամեն բաները,
որոնցմով մարդ կը Զանայ զԱստուած
պատուել, որոնց և ո՛չ մէկուն մէջ
թերի գտնուած չէր եղբայրս :

Արբոր իրեն ամեն ամիս հրամա-
նագիր կը ղրկուէր, ինչպէս շատ տե-
ղեր սովորութիւն է կ'ընէն, զարմա-

նալի յարգանք մը կ'ընդունէր զանոնք, և ամեն օր անոնց վճիռը կը պատմէր : Իսկ իրեն կենաց վերջին չորս տարիս ներուեն մէջ, որովհետև կարողութիւն չունէր աշխատելու, ուստի միակ զբօսանքն էր այցելութիւն ընել Այկեղեցեաց, ուր կային սրբոց մասունքներ դուրս հանուած և կամ որ և իցէ հանդէս, և ասոր համար տօնացայց մը ևս ունէր, որով տեղեացը տեղեակ կ'ըլլար, ուր մասնաւոր ջերմեռանդն Աստուածպաշտութիւն կը տեսնէր. և այս ամենը այնպիսի բարեպաշտութեամբ կը կատարէր, որ ամեն տեսնողները կը հիանային. եւ այս եղաւ առիթ այն ընտիր խօսքին՝ զոր առաքինի և լուսաւորեալ անձ մը ըսաւ. « Աստուածային շնորհքը՝ փոքրիկ բաներու միջոցաւ մեծ մտքերու մէջ կը յայտնուի. իսկ մեծամեծ բաներու միջոցաւ հասարակ մտաց մէջ » :

Այս մեծ պարզմտութիւնը մանաւանդ այն ատեն կը յայտնուէր, երբ

ճարդիկ իրեն հետ Աստուծոյ վրայ՝ կը
խօսէին, և կամ ինքնին խօսք կը բա-
նար անոր վրայ, այնպէս որ նոյն իսկ
մահուան ժամանակներուն մէջ գիտ-
նական և առաքինի կղերական մը՝ սր
իրեն խնդրանաց համեմատ զինքը տես-
նելու եկած էր, մէկ ժամ ամբողջ ի-
րեն մօտ կենալէն զկնի այնպիսի հա-
ճութեամբ մը անկից ելաւ, որ ինձ ը-
սաւ. « Գնացէք, մխիթարուեցէք, ե-
թէ Տէրը զինքը կը կոչէ, դուք շատ
առիթ կամ նիւթ ունիք գովելու այն
շնորհքները՝ զորս անոր տուաւ: Աս
միշտ անոր մեծամեծ ձրից վրայ զար-
մանքս յայտներ եմ, սակայն երբէք ա-
նոր այն մեծ պարզամտութիւնը եւ
յտակութիւնը չէի նշմարած՝ բայց
եթէ հիմա. ասիկա անհամեմատ ձիրք
մ' է այնպիսի մտքի տէր եղող անձի
մը վրայ, ինչպէս որ ինքն է, ուստի
ամենայն յօժարութեամբ կ'ուզէի ի-
րեն տեղը ըլլալ »:

Արքայն Ստեփաննոսի Ժողովուրդա-

տեսը՝ որ եղբորո հիւանդութեան աստեն տեսած էր արգէն անօր փրայ մի և նոյն բանը, ուստի ամեն ժամանակ համարձակ կ'ըսէր՝ թէ մանուկ մ' է ասիկա, խոնարհ է և մանկան մը հը նազանդութիւնը ունի, Այս պարզ մտութիւնն է որ անօր ամենայն ազատութեամբ իրեն սխալանքները յանցանքները խստովանիլ կուտայ, և աւանց ընդգիմութեան կ'ընգունի այն խորհուրդները՝ զոր իրեն կուտան։ Այլբարս մտաց անհնարին աշխուժութիւնը՝ երբեմն զինքը այնպէս անհամբեր կը դարձունէր որ վանիկայ հաճելու համար բաւական աշխատութիւն կը քաշէինք. բայց երբ իրեն կը զեկուցանէինք կամ ինքնին կը նշմարէր թէ իրեն անհամբերութեամբ մէկը զայրացուցած էր, անմիջապէս անոր առաջը կ'առնէր իւր այնպիսի քաղցր կենսակցութեամբը և այնպիսի բարեբարութեամբ, որ երբէք այս պատճառաւ մէկուն բարեկամութիւնը չընդհար

որնցուց : Կը ջանամ համառ օտել , վա
սընդի ամեն մէկ պատահման ամեն պա
րագաները չեմ ուզեր մանրամասն նը
կարագրել . ուստի կըսկսիմ ահա պատ
մել նորա վերջին հիւանդութիւնը :

Այս անհնարին անսխորժութի
մը սկսաւ իւր մահէն երկու ամիս յա
ռաջ . իւր բժիշկը խորհուրդ տուաւ
իրեն դժուարամարս բաներ չուտել ,
և ներսի դին յստակել կամ մաքրել .
այս վիճակին մէջ եղած ատեն նշա
նաւոր գործ մը գործեց , որ դարձեալ
իւր ընկերասիրութեան արդիւնքն էր .
Բարի մարդ մը իւր բոլոր ընտանիքու
վը եղբօրմէս յօժարակամ տրուած
տան մէկ սենեկին մէջ կը բնակէր , ու
բուն կուտար նաեւ փայտ և ուրիշ
բաներ միմիայն ողորմածութենէ շար
ժեալ , վասն զի անորմէ և ոչ իսկ ծա
ռայութիւն մը կը պահանջէր , այլ մի
այն տան մէջ միայնակ չը մնալու հա
մար : Այս մարդը որդի մը ունէր որ
այն ժամանակին հիւանդացած էր ծա

ղկի ակտով. եղբայրս՝ որ իմ ծառայող-
թեանցս հարկաւորութիւնը կըզ-
գար, սկսաւ վախնալ որ չըլլայ թէ իմ
զաւակացս համար՝ հոն երթալու եր-
կիւղ մը կրեմ ես սրտիս մէջ: Այս մը
տածութիւնը զինքը ստիպեց հիւան-
դէն բաժնուիլ. բայց որովհետեւ կ'եր-
կնչէր նաեւ որ գուցէ այս բնակու-
թեան փոփոխութիւնը վտանգաւոր
ըլլայ անոր, ուստի լաւ համարեց որ ին-
քը փոխադրուի մեր տունը, ըսելով
թէ « ինձ պակաս վտանգ կայ այս փո-
խադրութեան մէջ, ասոր համար ինձ
պէտք է ձգել տունս »: Այսպէս յու-
նիս 29 ին մեր տունը փոխադրեցաւ
իւր տնէն, ուր վերստին չը մտաւ եր-
բէք. վասն զի երեք օրէն յետոյ սառ-
տիկ խիթ մը վրայ գալով, բոլորովին
քուն ըսածդ բարձաւ իրմէ. բայց ու-
րովհետեւ մտքի կորովութիւնն և եւս
մեծ քաջութիւն մը ունէր, ուստի
իւր անհնարին ցաւերուն կը դիմա-
նար զարմանալի համբերութեամբ:

Արբէք չէր թողուր որ մէկը փոքրիկ ծառայութիւն մը իրեն մատուցանէ, ինչպէս և մինչեւ անգամ ամեն օր կ'ելէր անձամբ իրեն դեղերը առնելու, իրեն նայող բժիշկները տեսնելով նորա ցաւոց օր քան զօր սաստկանալը՝ բայց որովհետեւ երակաց շարժումները աղէկ կը գտնէին և թէ փոփոխութիւն մը եւս կամ ջերմի երեւոյթ մը չըլլարով, կը յուսացնէին որ վաանգ չի կար. այսպէս շարունակ այս բառերը գործ կը դնէին. «Վտանգի օտուերն անգամ չի կայ» : Բայց և այնպէս չը նայելով եղբայրս այս խօսքին, և մանաւանդ տեսնելով որ իւր ցաւոց շարունակութիւնը զինքը ստատիկ կը տկարացնէր, իւր խիթին չորրորդ օրը Պ. Ժողովուրդապետը խրկեց բերել սուտ և խոստովանեցաւ : Եւս գործը՝ մեծ աղմուկ հանեց, իրեն բարեկամներէն մէկ քանին ստիպուեցան գալ զինքը տեսնելու լի երկիւղով : Աոյն իսկ բժիշկները այնպէս

զարմացան որ յայանեցին իրեն . թէ այս երկիւղի նշան էր զոր իբժէ չէին յուսար : Եւ զբայրս այս յուզումը տեսնելով, զոր պատճառած էր իւր խառտովանութիւնը, բաւականին նեղացաւ և ինձ ըսաւ թէ . « Եւ կամեցայ հաղորդուիլ, բայց կը տեսնեմ որ մաքդիկ զարմացած են իմ խոստովանութեանս վրայ, և այսուհետեւ այլ չը զարմացնելու համար նախամեծար կը համարեմ յապաղել զայն : Եւ 9. յողովրդապետը եւս այս կարծիքէն ըլլալով՝ չը հաղորդուեցաւ : Ասկայն իւր ցաւը կը շարունակէր . և որովհետեւ 9. յողովրդապետը երբեմն երբեմն զինքը տեսնելու կուգար իբր այցելու, ուստի և ոչ առիթ մը կը կորսընցներ խոստովանելու, և բան մ'ալ չէր ըսեր ուրիշին զանոնք չը վերգովելու համար . որովհետեւ բժիշկները կ'ապահովցնէին զամենքը թէ վտանգ մը և կամ երկիւղ մը չիկայ անոր հիւանդութենէն, և յիրաւի

նուազու թիւն մը տեսնուեցաւ իւր
 ցաւոց, այնպէս որ երբեմն իւր սե-
 նեկին մէջ ոտքի կ'ելէր : Բայց բոլ-
 րովին զինքը չը թողուցին, և երբեմն
 եւս կը վերադառնային, ուստի սկսեր
 էին զինքը նիհարցնել. և ասիկայ այն-
 չափ չէր վախցնէր բժիշկները. բայց
 ինչ որ ըսէին, եղբայրս կը կրկնէր՝ թէ
 ինքը վտանգի մէջ էր, և չը դադարե-
 ցաւ երբէք խոստովանելէ որքան ան-
 գամ որ Պ. Դողովորդապետը իրեն մօտ
 եկաւ. եւ այս միջոցիս էր, որ իւր
 կտակը ըրաւ, որուն մէջ երբէք աղ-
 քատները չը մոռցուեցան : Հրամա-
 յեց սաստկապէս, որ տլ բան մը չը
 տրուի անոնց, որովհետեւ ինձ ըսաւ
 եթէ Պ. Փերիէ Փարիզ երթայ և հա-
 ւանի, իրեն բոլոր բարիքները աղքա-
 տաց պիտի ընծայէր. վերջապէս մլտ-
 քին և սրտին մէջ ոչինչ չունէր բայց
 միայն աղքատները. և երբեմն սրտին
 զեղումը դուրս թափելով կ'ըսէր ինձ.
 « Ինչո՞ւ համար ես բան մը չըրի աղքա-

տաց համար, թէպէտ և շարունակ դէպ
ի աղքատները մեծ սէր մը սրտիս մէջ
տածեցի ։ Եւ ըսի իրեն թէ՛ « Որով
հետեւ քաւականին ստացուածք չու
նէիք անոնց մեծ օգնութիւններ ը
ներու ։ որուն նա պատասխանեց .
« Որովհետեւ ես չունէի մեծ հարըս
տութիւն անոնց օգնելու , պարտաւոր
էի սակայն իմ ժամանակս և աշխա
տութիւնս անոնց նուիրել , և ահա
ասոր մէջն է իմ թերութիւնս , և եւ
թէ բժիշկները ճշմարիտ կը խօսին , և
եթէ Լյատուած այս անգամ եւս ինձ
չնորհէ իմ առողջութիւնս , որոշած
եմ որ երբէք ուրիշ պաշտօնի կամ ու
րիշ վճարանաց չըպիտի տամ իմ անձս .
բայց միայն աղքատաց ծառայելու ։ »
Եւ յսպիսի զգացմանց մէջ էր ահա , ուր
տէրը զինքը կոչեց .

Եղբայրս՝ իւր եռանդնալից աղ
քատիրութեանը հետ այնպիսի զար
մանալի համբերութիւն մը կը միացու
նէր , որ իրեն շուրջ եղող անձանց մե

ճապէս օրինակ կ'ըլլար և կը զարմա-
 ցունէր իսկ զանոնք, և որոնք որ վիշտ
 և ցաւ կը յայտնէին զինքը այնպիսի
 վիճակի մը մէջ տեսնեցնուն համար,
 պատասխան կ'ըստանային այսպէս. « Ի՞մ
 կողմէս չեմ ցաւիր, և կ'երկնչիմ ևս
 առողջութենէս »: Արուն երբ պատու
 ճառը կը հարցունէին կ'ըսէր. « Արովհե-
 տեւ ես կը ճանչնամ առողջութեան
 վտանգները, և հիւանդութեան օ-
 գուտները »: Իարձեալ իրեն ցաւոց
 ամենասաստիկ ժամանակը, երբ կը
 տեսնէր որ իրեն վրայ հուլային, կ'ը-
 սէր. « Ի՞մ վերայ մի լաք և մի զիս ող-
 բաք, հիւանդութիւնը՝ ամեն քրիս-
 տոնէից բնական վիճակն է. ժան զի
 անով մարդը չարութիւն գործելէն
 կը գաղարի, ինչպէս որ պէտք էր ամեն
 ժամանակ այնպէս ըլլալ, անով զգայա-
 րանաց հաճոյքներէն կը զրկուի և ա-
 մեն շահերէ անմասն, ազատ ամեն
 կիրքերէ որ կը տառապեն զմարդ իւր
 կենաց ամեն վայրկենին մէջ. վերջաւ-

պէս ազատ է փառասիրութենէ ազա-
հութենէ՝ միշտ մահու ակնկալելով :
Քրիստոնէի մը կեանքը՝ պէտք չէ մի-
որ պատէս անցնի : Արջանկութիւն մը
չէ մարգուն , երբ քնքզինքը այնպիսի
միճակի մը մէջ կը գտնէ ՚ի հարկէն, ուր
ստիպուած էր արգէն ըլլալ , և թէ
իբն բան մը չըմտար ընելու . բայց մի-
այն խանարհութեամբ և անդորրութիւ
հնազանգել , այս պատճառաւ այս
չնորհքը միայն կը խնդրեմ աստուա-
ծային գթութենէն : Ահա այս բոլոր
նեղութեանց և չարեաց տես քնչ միտ-
քով կը դիմանար և կը համբերէր :

Հատ կը բազմար հաղորդութիւն
ատնաւ , բայց բժիշկները ասոր դէմ
կը դնէին , ըսելով թէ չի կրնար ծով
կենալ , միայն թէ գիշերուան ժամա-
նակ կարելի է . բայց այսպէս պատշաճ
չէին դատեր առանց մեծ պարտաւո-
րութեան կատարելու . և թէ սուրբ
խորհրդէն ճաշակելու համար պէտք
էր մահուան ճգնաժամին ըլլար , զոր

իր վրայ չընշմարելով չէին կրնալ այս
խորհուրդը տալ իրեն : Այս ընդդէ-
մութիւնը՝ զինքը կը զայրացունէր ,
բայց ստիպուած էր տեղի տալու :
Սակայն իւր տկարութիւնը կը շարու-
նակուէր կրկին , որուն համար պատ-
ուիրեցին ջուր խմել , որ արդարեւ
զինքը մեծապէս հանգստացուց : Բայց
օգտատոսի ճիւն էր , թմրութիւն մը ե-
կաւ վրան՝ սաստիկ գլխու ցաւով մը
հանդերձ . և թէպէտ բժիշկները ա-
սոր վրայ չը զարմացան , և թէ զինքը
կ'ապահովցնէին թէ այս ուրիշ բան
չէր բայց միայն ջրոց շոգին , բայց եղ-
բայրս ուզեց խոստովանիլ , և անհա-
ւատալի թախանձանքներով խնդրեց
որ հաղորդութիւն եւս առնէ , և թէ
յանուն Աստուծոյ միջոցաւ մը թող
առաջն առնուի այն արգելքներուն ,
որք մինչ ցարդ յերեւան ելան . և այն-
չափ ստիպմունքներ ըրաւ ասոր հա-
մար , մինչև անձ մը որ ներկայ էր , ըս-
կըսաւ զինքը մեղադրել , թէ անհան-

դատութիւն ունիս, թէ պէտք է բա-
րեկամներուդ հաւատաս, թէ աղէկ
վիճակի մէջ ես, թէ տկարութիւնդ
գրեթէ լմնցեր է, թէ միայն ջրոց շո-
գին կայ, և թէ իրաւունք չէ որ բե-
րել տաս սուրբ խորհուրդը, զոր ա-
ւելի լաւ է ուշացնել եկեղեցւոյ մէջ
կատարելու համար : Ասոր եղբայրս
պատասխանեց . « Արդ մը իմ ցաւս
չըզգար, ուստի կը խաբուին . իմ գլխուս
ցաւը արտաքոյ կարգի զօրաւոր
է : Բայց և այնպէս տեսնելով այնպի-
սի մեծ ընդդիմութիւն մը իւր բազ-
մանաց դէմ, չիշխեց այլ եւս անոր
վրայ խօսք բանալ, բայց ըսաւ « Արով-
հետեւ մարդիկ չիկամեցան այս շը-
նորհքը ինձ ընել, կ'ուզեմ անոր թե-
րին լեցունել բարի արարքով, և եթէ
չը կարացի հաղորդակցիլ գլխուն հետ
(Յիսուսի) կ'ուզեմ գէթ նոյնը ընել ա-
նոր անդամոց հետ . ասոր համար մտա-
ծեցի թէ ինձ պէտք է տանս մէջ աղ-
քատ մը ունենալ, որուն մի և նոյն հա-

տրնցուց : Կը ջանամ համառ օտել , վա
սընդի ամեն մէկ պատահման ամեն պա
րագաները չեմ ուզեր մանրամասն նը
կարագրել . ուստի կըսկսիմ ահա պատ
մել նորա վերջին հիւանդութիւնը :

Այս անհնարին անախորժութիւ
մը սկսաւ իւր մահէն երկու ամիս յա
ռաջ . իւր բժիշկը խորհուրդ տուաւ
իրեն դժուարամարս բաներ չուտել ,
և ներսի դին յստակել կամ մաքրել .
այս վիճակին մէջ եղած ատեն նշա
նաւոր գործ մը գործեց , որ դարձեալ
իւր ընկերասիրութեան արդիւնքն էր :
Բարի մարդ մը իւր բոլոր ընտանիքս
վը եղբորմէս յօժարակամ տրուած
տան մէկ սենեկին մէջ կը բնակէր , ու
բուն կուտար նաեւ փայտ և ուրիշ
բաներ միմիայն ողորմածութենէ շար
ժեալ , վասն զի անորմէ և ոչ իսկ ծա
ռայութիւն մը կը պահանջէր , այլ մի
այն տան մէջ միայնակ չը մնալու հա
մար : Այս մարդը որդի մը ունէր որ
այն ժամանակին հիւանդացած էր ծու

ղկի ախտով. եղբայրս՝ որ իմ ծառա-
յութեանցս հարկաւորութիւնը կըզ-
գար, սկսաւ վախնալ որ չըլլայ թէ իմ
զաւակացս համար՝ հոն երթալու եր-
կիւղ մը կրեմ ես սրտիս մէջ: Այս մը
տածութիւնը զինքը ստիպեց հիւան-
դէն բաժնուիլ. բայց որովհետեւ կ'եր-
կնչէր նաեւ որ գուցէ այս բնակու-
թեան փոփոխութիւնը վտանգաւոր
ըլլայ անոր, ուստի լաւ համարեց որ ին-
քը փոխադրուի մեր տունը, ըսելով
թէ « Ինձ պակաս վտանգ կայ այս փո-
խադրութեան մէջ, ասոր համար ինձ
պէտք է ձգել տունս »: Այսպէս յու-
նիս շոյ ին մեր տունը փոխադրեցաւ
իւր տնէն, ուր վերստին չը մտաւ եր-
բէք. վասն զի երեք օրէն յետոյ սաս-
տիկ խիթ մը վրայ գալով, բոլորովին
քուն ըսածդ բարձաւ իրմէ. բայց ու-
րովհետեւ մտքի կորովութիւն և եւս
մեծ քաջութիւն մը սւնէր, ուստի
իւր անհնարին ցաւերուն կը դիմա-
նար զարմանալի համբերութեամբ:

Արբէք չէր թողուր որ մէկը փոքրիկ ծառայութիւն մը իրեն մատուցանէ, ինչպէս և մինչեւ անգամ ամեն օր կ'ելլէր ահձամբ իրեն դեղերը առնելու, իրեն նայող բժիշկները տեսնելով նորա ցաւոց օր քան զօր սաստկանալը՝ բայց որովհետեւ երակաց շարժումները աղէկ կը գտնէին և թէ փոփոխութիւն մը եւս կամ ջերմի երեւոյթ մը չըլլարով, կը յուսացնէին որ վտանգ չի կար. այսպէս շարունակ այս բառերը գործ կը դնէին. «Վտանգի օտուերն անգամ չի կայ»։ Բայց և այնպէս չը նայելով եղբայրս այս խօսքին, և մանաւանդ տեսնելով որ իւր ցաւոց շարունակութիւնը զինքը սառաիկ կը տկարացնէր, իւր լօխիւն չորրորդ օրը Պ. ժողովրդապետը խրկեց բերել սուտ և խոստովանեցաւ. «Ես գործը՝ մեծ աղմուկ հանեց, իրեն բարեկամներէն մէկ քանին ստիպուեցան գալ զինքը տեսնելու լի երկիւղով: Աոյն իսկ բժիշկները այնպէս

զարմացան որ յայտնեցին իրեն , թէ այս երկիւղի նշան էր զոր իրմէ չէին յուսար : Եղբայրս այս յուզումը տեսնելով , զոր պատճառած էր իւր խոստովանութիւնը , բաւականին նեղացաւ և ինձ լսաւ թէ . « Ես կամեցայ հաղորդուիլ , բայց կը տեսնեմ որ մարդիկ զարմացած են իմ խոստովանութեանս վրայ , և այսուհետեւ այլ չը զարմացնելու համար նախամեծար կը համարեմ յապաղել զայն : Եւ Պ. Եղովրդապետը եւս այս կարծիքէն ըլլալով՝ չը հաղորդուեցաւ : Սակայն իւր ցաւը կը շարունակէր . և որովհետեւ Պ. Եղովրդապետը երբեմն երբեմն զինքը տեսնելու կուգար իբր այցելու , ուստի և ոչ առիթ մը կը կորսնցնէր խոստովանելու , և բան մ'ալ չէր ըսեր ուրիշին զանոնք չը վերագովելու համար . որովհետեւ բժիշկները կ'ապահովեցնէին զամենքը թէ վտանգ մը և կամ երկիւղ մը չիկայ անոր հիւանդութենէն , և յիրաւի

Նուազուծիւն մը տեսնուեցաւ իւր
 ցաւոց, այնպէս որ երբեմն իւր սե-
 նեկին մէջ ոտքի կ'ելէր : Բայց բոլ-
 րովին զինքը չը թողուցին, և երբեմն
 եւս կը վերադառնային, ուստի սկսեր
 էին զինքը նիհարցնել, և ասիկայ այն-
 չափ չէր վախցներ բժիշկները : Բայց
 ինչ որ ըսէին, եղբայրս կը կրկնէր՝ թէ
 ինքը վտանգի մէջ էր, և չը դադարե-
 ցաւ երբէք խոստովանելէ որքան ան-
 գամ որ Պ. Եղիշտիւնը իրեն մօտ
 եկաւ : Եւ այս միջոցիս էր, որ իւր
 կտակը ըրաւ, որուն մէջ երբէք աղ-
 քատները չը մոռցուեցան : Հրամա-
 յեց սաստկապէս, որ ալ բան մը չը
 տրուի անոնց, որովհետեւ ինձ ըսաւ
 եթէ Պ. Փերիէ Փարիզ երթայ և հա-
 ւանի, իրեն բոլոր բարիքները աղքա-
 տաց պիտի ընծայէր : վերջապէս մըտ-
 քին և սրտին մէջ ոչինչ չունէր բայց
 միայն աղքատները : և երբեմն սրտին
 զեղումը դուրս թափելով կ'ըսէր ինձ .
 « Ինչո՞ւ համար ես բան մը չըրի աղքա-

տաց համար, թէպէտ և շարունակ դէպ
ի աղքատները մեծ սէր մը սրտիս մէջ
տածեցի ։ Եւ ըսի իրեն թէ՛ « Որով
հետեւ բաւականին ստացուածք չու
նէիք անոնց մեծ օգնութիւններ ը
ներու ։ որուն նա պատասխանեց .
« Որովհետեւ ես չունէի մեծ հարըս
տութիւն անոնց օգնելու , պարտաւոր
էի սակայն իմ ժամանակս և աշխա
տութիւնս անոնց նուիրել , և ահա
ասոր մէջն է իմ թերութիւնս , և ե
թէ բժիշկները ճշմարիտ կը խօսին , և
եթէ Լյատուած այս անգամ եւս ինձ
չնորհէ իմ առողջութիւնս , որոշած
եմ որ երբէք ուրիշ պաշտօնի կամ ու
րիշ զբաղանաց չըպիտի տամ իմ անձս ,
բայց միայն աղքատաց ծառայելու ։
Լյսպիսի զգացմանց մէջ էր ահա , ուր
տէրը զինքը կոչեց ։

Եղբայրս՝ իւր եռանդնալից աղ
քատիրութեանը հետ այնպիսի զար
մանալի համբերութիւն մը կը միացու
նէր , որ իրեն շուրջ եղող անձանց մե

ճապէս օրինակ կ'ըլլար և կը զարմա-
ցունէր իսկ ղանոնք, և որոնք որ վիշտ
և ցաւ կը յայտնէին զինքը այնպիսի
վիճակի մը մէջ տեսնեցնուն համար,
պատասխան կ'ըստանային այսպէս. « Ի՞մ
կողմէս չեմ ցաւիր, և կ'երկնչիմ ևս
առողջութենէս »: Արուն երբ պատ-
ճառը կը հարցունէին կ'ըսէր. « Արովհե-
տեւ ես կը ճանչնամ առողջութեան
վտանգները, և հիւանդութեան օ-
գուտները »: Դարձեալ իրեն ցաւոց
ամենասաստիկ ժամանակը, երբ կը
տեսնէր որ իրեն վրայ կուլային, կ'ը-
սէր. « Ի՞մ վերայ մի ըսք և մի զիս ող-
բար, հիւանդութիւնը՝ ամեն քրիս-
տոնէից բնական վիճակն է. վասն զի
անով մարդը չարութիւն գործելէն
կը դադարի, ինչպէս որ պէտք էր ամեն
ժամանակ այնպէս ըլլալ, անով զգայա-
րանաց հաճոյքներէն կը զրկուի և ա-
մեն շահերէ անմասն, ազատ ամեն
կիրքերէ որ կը տառապեն զմարդ իւր
կենաց ամեն վայրկենին մէջ. վերջա-

պէս ազատ է սխառասիրութենէ ազա-
հութենէ՝ միշտ մահու ակնկալելով :
Քրիստոնէի մը կեանքը՝ պէտք չէ մի-
որ պսակէս անցնի : Արջանկութիւն մը
չէ մարդուն , երբ քնքզինքը այնպիսի
վիճակի մը մէջ կը գտնէ ՚ի հարկէն, ուր
ստիպուած էր արգէն ըլլալ , և թէ
իրեն բան մը չլինար ընելու . բայց մի-
այն խանարհութեամբ և անդորրութիւ
հնազանգել . այս պատճառաւ այս
շնորհքը միայն կը խնդրեմ աստուա,
ծային գթութենէն ո : Ահա այս բոլոր
նեղութեանց և չարեաց տես քնչ միտ-
քով կը դիմանար և կը համբերէր :

Հատ կը բազմար հաղորդութիւն
առնաւ , բայց բժիշկները ասոր դէմ
կը դնէին , ըսելով թէ չի կրնար ծով
կենալ , միայն թէ գիշերուան ժամա-
նակ կարելի է . բայց այսպէս տատառ
չէին դատեր առանց մեծ պարտաւո-
րութեան կատարելու . և թէ սուրբ
խորհրդէն ճաշակելու համար պէտք
էր մահուան ճգնաժամին ըլլար , զոր

իր վրայ չընշմարեւոյժ չէին կրնար այս
խորհուրդը տալ իրեն : Այս ընդդէ-
մութիւնը՝ զինքը կը զայրացունէր ,
բայց ստիպուած էր տեղի տալու :
Սակայն իւր ակարութիւնը կը շարու-
նակուէր կրկին , որուն համար պատ-
ուիրեցին ջուր խմել , որ արդարեւ
զինքը մեծապէս հանգստացուց : Բայց
օգտատուի ճիւղն էր , թմրութիւն մը ե-
կաւ վրան՝ սաստիկ գլխու ցաւով մը
հանդերձ . և թէպէտ բժիշկները ա-
սոր վրայ չը զարմացան , և թէ զինքը
կ'ապահովցնէին թէ այս ուրիշ բան
չէր բայց միայն ջրոց շոգին , բայց եղ-
բայրս ուզեց խոստովանիլ , և անհա-
ւատալի թախանձանքներով խնդրեց
որ հաղորդութիւն եւս առնէ , և թէ
յանուն Աստուծոյ միջոցաւ մը թող
առաջն առնուի այն արգելքներուն ,
որք մինչ ցարդ յերեւան ելան . և այն-
չափ ստիպմունքներ ըբաւ ասոր հա-
մար , մինչև անձ մը որ ներկայ էր , ըս-
կըսաւ զինքը մեղադրել , թէ անհան-

դատութիւն ունիս, թէ պէտք է բարեկամներուդ հաւատաս, թէ աղէկ վիճակի մէջ ես, թէ տկարութիւնդ գրեթէ լմնցեր է, թէ միայն ջրոց շոգին կայ, և թէ իրաւունք չէ որ բերել տաս սուրբ խորհուրդը, զոր աւելի լաւ է ուշացնել եկեղեցւոյ մէջ կատարելու համար : Ասոր եղբայքս պատասխանեց . « Մարդ մը իմ ցաւս չըզգար, ուստի կը խաբուին . իմ գլխուս ցաւը արտաքոյ կարգի զօրաւոր է : Բայց և այնպէս տեսնելով այնպիսի մեծ ընդդիմութիւն մը իւր բաղձանաց դէմ, չիշխեց այլ եւս անոր վրայ խօսք բանալ, բայց ըսաւ « Արովհետեւ մարդիկ չիկամեցան այս ջրնորհքը ինձ ընել, կ'ուզեմ անոր թերին լեցունել բարի արարքով, և եթէ չըկարացի հաղորդակցիլ գլխուն հետ (Յիսուսի) կ'ուզեմ գէթ նոյնը ընել անոր անդամոց հետ . ասոր համար մտածեցի թէ ինձ պէտք է տանս մէջ ազգատ մը ունենալ, որուն մի և նոյն հա

բացողութիւնները ըլլան ինչպէս ինձ ,
առանձին պահպանութիւն ընեն եւ
խնամք տանին . վերջապէս երբէք խրա-
րութիւն մը չըլլայ իմ եւ անոր մէջ ,
որպէս զի սա միտթարութիւնը ունե-
նամ թէ՛ կայ աղքատ մը որ ինձ պէս
կը հոգացուի , առատութեան մը մէջ
ուր կը գտնուիմ ետ . որովհետեւ մի եւ
նոյն ժամանակ երբ կը մտածեմ որ ես
այսչափ աղէկ եմ , եւ թէ կայ անթիւ
բազմութիւն աղքատաց , որոնք աւել-
լի հիւանդ են քան զիս եւ միանգա-
մայն զուրկ ամենահարկաւոր բանե-
րէն , այս ինձ մեծ վիշտ կու տայ զոր
չեմ կրնար կրել , եւ այսպէս կ'աղաչեմ ,
Պ . յողովորդապետէն խնդրեցէք որ
հիւանդ մը գտնէ ունեցած նպատա-
կիս համար 7 :

Նոյն ժամուէն Պ . յողովորդապետին
մարդ խրկեցի , որ իմացուց թէ այն-
պիսի փոխադրութեան վիճակի մէջ
գտնուող հիւանդ մը չիկայ . բայց խօսք
կուտամ որ ինքը երբ առողջանայ , կը

գտնեմ միջոց մը իրեն մարդասիրու-
թիւնը 'ի գործ դնելու, յանձնելով
իրեն ծերունի մը՝ որուն վրայ թող
խնամք տանի իւր կենաց բոլոր մնա-
ցորդին մէջ. որովհետեւ յողովուրդա-
պետը կասկած մը չունէր անոր առող-
ջանալուն վրայ: Այդ տեսաւ եղբայրս
որ չէր կրնար իրեն տան մէջ աղքատ
մը օւնենալ իրեն հետ, զիս ազաչեց
որ իրեն շնորհք մը բնեմ, այն է զինքը
աղքատաց հիւանդանոցը տանել տամ,
որովհետեւ աղքատաց բնկերութեան
մէջ մեռնելու սաստիկ իղձ ունէր: Այս
իրեն բսի թէ՛ բժիշկները յարմար չեն
գատեր այժմեան վիճակիդ մէջ տեղ
ւոյ փոխադրութիւն բնել. որուն վրայ
չատ արտմեցաւ. ինձմէ խոստումն ա
ուաւ որ եթէ քիչ մը հանգստութիւն
գտնէ, իւր այս խնդիրը կատարեմ:
Սակայն այս գլխու ցաւը քանի գնաց
սաստկացաւ, որուն կը տոկար այնպէս՝
ինչպէս միւս ամեն նեղութեանց եւ
չարչարանաց, այսինքն առանց դժգոյ


ութեան, և մէկ անգամ սեպտեմբերի 17ին էր՝ ինձ աղաչեց խորհրդակցութիւն մը ընել, բայց իսկոյն կասկածի երթալով ըսաւ. «Եւ վախնամ որ այս խնդրոյս մէջ թերի գտնուեցաք, շատ չորոնելով ո՞ սակայն ես չէի ձգէր զայն ՚ի գլուխ տանել, և բժիշկները պատուիրեցին որ շիճուկ խմէ, միշտ ապաւ հովցնելով որ վտանգ մը չը կար, եւ թէ այս ուրիշ բան չէր՝ բայց եթէ նիհարութիւն խառնուած ջրոց գոլոր շիին հետ: Բայց և այնպէս ինչ որ ըսէին, եղբայրս անոնց երբէք չը հաւատաց. և ինձ աղաչեց որ եկեղեցական մը բերել տամ գիշերը իրեն մօտ. և այս անգամ նոյն իսկ ես գէշ վիճակի մէջ գտնելով զանիկայ, հրաման ըրի առանց լուր տարածելու, մամեր բերել և ուրիշ այն ամեն բաները, որոնք վաղը առտուն հաղորդութիւնը տալու համար պէտք էին:

Այս պատրաստութիւնները անգուտ չեղան և մանաւանդ աւելի

չուտ պէտք եղան մեր ենթադրածէն, վասն զի գրեթէ կէս գիշեր էր, այն պիսի ջղաձգութիւն մը բռնեց զինքը, որ երբ թող տուաւ, կարծեցինք թէ մեռած էր. և կը սոսկայինք շատերուն հետ տեսնելով որ առանց սրբութեան կը մեռնի, այնքան թախանձանօք և ժտութեամբ խնդրելէն զկնի: Ի այց Լստուած որ կը կամէր անոր այնքան արդար եւ եռանդուն իղձը վարձաւորել, գրեթէ հրաշքով մը բուրրովին այդ ջղաձգութիւնը դադրեցունելէն վերջը, իւր բոլոր դատողութիւնը իրեն դարձուց, այնպէս որ կարծես թէ կատարեալ առողջ էր. որուն վըրայ Պ. Դսղովրդապետը Արքութիւնը հետը մտաւ եղբօրս սենեկին մէջ և աղաղակեց. «Լհա այն՝ որուն այնքան ցանկացար ու Լյս խօսքը բաւական եղաւ զանիկայ արթնցունելու, և երբ Պ. Դ. մօտեցաւ որ տայ, վերջին ճիգ մը ըրաւ եղբայրս ելաւ և կէս նստաւ որ յարգանք ընդունի Արք

բաւթիւնք : Գ. յ. հաւատոյ գլխաւոր խորհրդոց վրայ քանի մը բան հարցուց սովորութեան համեմատ, որուն եղբայրս յստակ կերպով պատասխանեց . « Լ՛յտ՛, Գ. բոլոր սրտանց կը հաւատամ այս ամենուն ր. յետոյ ընդունեց Արքաւթիւնն ու վերջին օծումը այնպիսի փափուկ զգացմամբ, որուն արտասուքը վկայեցին . Լ՛մենուն պատասխանելէն և Գ. յ. էն շնորհակալ ըլլալէն զինի, երբ անիկա սրբատուփով զինքը օրհնեց, ըսաւ՝ « Թող Լ՛ստուած զիս երբէք չըլքանէ ր. Լ՛սիկայ իւր վերջին խօսքը եղաւ, փան զի Արքաւթեանէն քիչ մը յետոյ ջղաձգութիւնը սաստիկ կերպով բռնեց զանիկա և այլ եւս չը թողուց մինչեւ իւր մահը, որ եղաւ 1663 օգոստոս 19 ին, առաւօտեան ժամանակ, և հաւակաւ 39 տարի 2 ամիս .

Վ Ե Ր Զ






UNIVERSITY OF MICHIGAN



3 90



Digitized by Google

